Հ. Ֆ. Դ.
ՄԱՄԼՈՅ ԳԻՒԱՆ

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ“ ՕՐԳԱՆ

1904

№ 10 (151) XIV ՏԱՐԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ 1904

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse: R. F. BURO
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

Հ. Յ. Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԳԱՐԱՆ R. F. BURO LIBRARY

ՑԱՐԻԶՄԻ ԴԷՄ

Տնքում ու հեծում է միապետական Ռուսաստանը՝ կարծես մահուան հանգրուանի մէջ... Բռնապետութիւնը շատ ահաւոր փորձութիւններ էր կրել իր դժնդակ պատմութեան ընթացքում, բայց նա չէր տեսել այսքան զարհուրելի մի անակնկալ, որի առջև մնացել է ապշած, ասես շանթահարուած: Ուրեմն ամիս շարունակ հարուածներ ստանալ՝ ծանր ու ջախջախիչ՝ և երբէք չտալ մի լուրջ հակահարուած, ուրեմն ամիս կրել շառաչիւն պարտութիւններ, յիսուն հազար դիակներ նետել Մոլոբի բերանը և գէթ մի վայրկեան յաղթող չհանդիսանալ— սարսափելի է, սարսափելի... Կարծես Նէմէզիդան իր զօրաւոր կատաղութեան մէջ՝ որոշել է թափել վրէժխնդրութեան բովանդակ թոյնը և վախճան դնել մի զազրելի գոյութեան, որ երկրագնդի ահագին տարածութեան վրայ ցանել է միայն ոճիր ու արիւն...

Ո՞ւր են վարդագոյն մարգարէութիւնները, որ այնքան վաղաժամ յաղթութեան դափնիներ էին խոստանում ցարին: Ո՞ւր մնաց Ռուսաստանի անպարտելիութիւնը, նրա „զինուորական մեծութիւնը", հմայքը... Ողբալի ֆիկցիաներ, որոնցով ասիական բռնապետութիւնը գիտէր վարպետորեն իր ներքին տկարութիւնը և թող տալ քաղաքակրթուած ժողովուրդների աչքին: Հէնց առաջին ընդհարումներից յետոյ օդը ցնդեցին այդ ստայօդ առասպելները և ոչ ոք այլևս չէ հաւատում նրանց:

Իններորդ ամիսն է, ինչ փոքրիկ Եպպոնեան անողորմ կերպով ծեծում է հիւսիսի „հսկային" և ոչինչ չէ երաշխաւորում, թէ այդ եզակի տրագիկոմեդիան ուրէ փոփոխութիւն կը կրէ ապագայում:

Պօրտ-Արտուր, Եալու, Վաֆանգու, Դաշիչաու, Լիաօ-Եանգ, Ենթայ—այն հսկայական կրկէսներն են, որոնք մոցրին համաշխարհային պատմութեան մէջ արիւնոտ էջեր ռուսաց զէնքի պարտութիւնների մասին: Դրանցից մի քանիսը կատաստրոֆի կերպարանք են ստանում և թերևս իրենց նմանը չունենան ժողովուրդների տարեգրութեան մէջ...

Տարբեր են, խիստ տարբեր երկու բանակները: Մի կողմում անսահման խանդավառութիւն և մղած դատի պայծառ գիտակցութիւն. միւս կողմում՝ ծոյլ, կրաւորական մի զանգուած, առանց թափի ու ոգևորութեան, որ առաջ է մղւում արքայի հրամանով, գնում է զոհւելու, ինքն էլ չիմանալով թէ ինչո՞ւ համար...

Տարբեր է ռազմի բարոյականը, տարբեր է և ռազմական արուեստը: Ամբողջ աշխարհը համաձայն է այսօր, որ Ռուսաստանը անհունօրէն ցած է Եպպոնիայից՝ կռիւ վարելու մէջ... Անթիւ են պատճառները, որոնք պայմանաւորում են վերջինի գոռ յաղթութիւնները և առաջինի անլուր տապալը, բայց այդ բոլոր պատճառները—ոգևորութեան բացակայութիւն, զօրավարների տգիտութիւն, կաշառակերութիւն, փոխադարձ թշնամութիւն ու անվերջ երկպառակութիւններ—այդ բոլոր պատճառները վերածելի են մէկ արմատական մայրապատճառի՝ Ռուսաստանի բռնակալ ռէժիմին...

Այդ գիտակցութիւնը, որ քչերի սեփականութիւն էր մինչև այժմ, սկսում է արագութեամբ տարածուել ու շեշտուել երկրի բոլոր անկիւններում: Որքան էլ մուժիկը լինի ստրկամիտ, որքան էլ նա լինի մոլեռանդ երկրպագու „ցար-բատիշկայի", այնուամենայնիւ հասնում է վայրկեանը, երբ նրա միտքը ևս սկսում է „պըղտորուել"... Երբ նա տեսնում է, թէ ինչպէս առանց այն էլ թշուառ ու արտասուելի իր կացութեան մէջ՝ գալիս են խլելու իր գերդաստանից աշխատաւոր, սիրած զաւակներին, ճամբելու համար ինչ որ անյայտ, հեռու երկիրներ, որոնց նուաճման ինքը պէտք չունի, մի թշնամու դէմ, որի հետ նա բնաւ տրամադիր չէ կռուել երբ հեռաւոր արևելքից անընդհատ գալիս են տասնեակ հազարաւոր ջարդուողների, վիրաւորների, խելագարուողների սարսափեցնող հեծեծանքները,—այո, անգամ արքայապաշտ ռուս մուժիկը ըմբոստանում է և ագահութեամբ ականջ է դնում իր շուրջը նետուող անհամար թռուցիկներին, պրոկլամասիօններին, որոնք միաձայն նշաւակում են պատերազմի հեղինակ-ցարիզմը և վերջնում են սովորական ազգու խօսքերով „Կորչի՛ միապետութիւնը"...

Այդ դիւթական խօսքերը վերջերս շատ են կրկնւում ու տարածւում, և եթէ պատերազմը մի ահռելի պատուհաս եղաւ երկրի համար, միւս կողմից նա հանդիսանում է գերագոյն բարիք, քանի որ ուժգին զարկ է տալիս ազատութեան դատին, լուսաւորում է կոյրերին, խրախուսում է համրերին, ալէկոծում է այն միլիոնաւոր անձայն մասսան, որը եթէ մի օր բարձրանայ, երկրաշարժ պիտի պատճառէ...

Նշանները երևում են արդէն: Ժողովրդական դժգո-

հութիւնը այլևս չէ մնում կաշկանդուած՝ նա արտայայտւում է յաճախ բարձրաձայն, հրապարակօրէն։ Ցարի միջամտութիւնն անգամ այլևս չէ օգնում։ Իզուր նրա ծառաները ճգնում են շարժել ժողովրդական սրտի նուրբ լարերից մինը՝ հ ա յ ր ե ն ա ս ի ր ո ւ թ ի ւ ն ը, իզուր են ճառում „ուղղափառ կրօնի պայքարի մասին հեթանոսութեան դէմ“, իզուր են ճչում, թէ „հայրենիքը վտանգի մէջ“ է,—ոչ ոք չէ հաւատում...

Եւ տեղի են ունենում սիրտ կտրատող տեսարաններ։ Պահեստի զօրքը ճամբելու միջոցին՝ լաց ու շիւանը ականջ է խլացնում։ Լալիս են ծնողները, այրիացող կիները, որբացող երեխաները։ Լալիս են և իրենք տարաբախտ զինւորները, որոնց սաներ սպանդանոց են առաջնորդում։ Շատերը փախչում են, շատերն էլ գերադասում են ինքնասպանութեամբ վերջ տալ իրենց կեանքին։ Ցասումը պատում է և քաղաքների ազգաբնակութեան։ Ամենուրեք՝ բողոք, անվստահութիւն և ատելութիւն դէպի կառավարութիւնը։

Հապա „Ծայրե՞րը“... Արկնակի ու Եռակի հարստահարուած ազգութիւնները կարող են միայն ուրախանալ ու ողջունել բուն ռուս ժողովրդի այդ փրկարար ա ր թ ն ո ւ մ ը և այդ տեսակէտից նրանք երախտապարտ են ներկայ պատերազմին։ Սակայն, ահա պատերազմի աղէտը նրանց ևս ուղղակի սկսո՜ւմ է սպառնալ։ Ռուսաց զօրքը արևելքում խիստ արագութեամբ է ջնջւում... Վերջին կատաստրօֆից յետոյ, ցարը որոշել է շարժման մէջ դնել հարիւր հազարաւոր ուրիշ լէգիօններ։ Եւ ահա ազդարարում են, որ շուտով պիտի կանչեն նաև Ծայրերի պահեստի զօրքերը, ռուսի հետ միասին՝ լեհը, վրացին, հայը ևն պիտի գնան զոհւելու Մանջուրիայի համար... Սփոփիչ է հեռապատկերը, ի՞նչ ասել կուզէ...

Բայց հալածական ժողովուրդները մ է կ պատասխան ունեն ցարի կառավարութեան անամօթ կոչին—իրենց միաձայն, վճռական veto-ն։

Եթէ ռուս զինւորներին դեռ աջողւում են որոշ չափով հրապուրել „հայրենիքի“ և „ուղղափառութեան“ ֆէտիշներով,—հայի, լեհի, վրացու համար այդ „հրապոյրը“ ևս գոյութիւն չունի։ Եւ հայը, լեհը, վրացին այն ատիճան չեն մեղկացել, որ համաձայնւեն գնալ թաղւելու Չինաստանի անապատներում, յանուն ցարիզմի, յանուն մի դատի, որ նրանք ատում են իրենց բոլոր էութեամբ։ Նրանք հազար անգամ կը գերադասեն մեռնել հայրենի հողի վրայ, զէնքը դարձնելով այդ նոյն ատելի ոսոխի դէմ...

Չեռնպահութի՜ւն,—ահա ներկայի հրամայական նշանաբանը։ Մօբիլիզացիայի բոլոր հրամաններին՝ բացարձակ մերժո՜ւմ, և եթէ հարկաւոր է, նոյնիսկ դիմադրութիւն, զինուած ցոյցեր...

Եթէ ցոյցերը մնան կղզիացած և սահմանափակ, ի՜նչ ասել կուզէ, կը խեղդւեն ամենայն անգթութեամբ, իսկ եթէ նրանք պայթեն միաժամանակ բազմաթիւ կէտերում, – բռնապետութիւնը շա՜տ պզոյշ կը լինի իր ճնշողական ձեռնարկների մէջ... Դիմադրական շարժումը կարող է ծաւալւել և յարատևել, կարող է նոյնիսկ եղերական դառնալ տիրող ռէժիմի համար...

Լեհաստանը յուզւում է արդէն, Վարշավայում տեղի ունեցաւ արիւնահեղ ցոյց՝ տակաւին զօրաշարժի հրամանից առաջ. Բալտեան նահանգներում նոյնպէս օր աւուր սաստկանում է մտքերի խմորումը։ Ֆինլանդիան թերևս կանգնած է այսօր լուրջ անցքերի նախադաւիթում... Բոլոր Ծայրերում, ամբողջ կայսրութեան մէջ տրամադրութիւնը հրաբխային է...

Բացառի՜կ մի շրջան, հազւադէ՜պ պատմական մի վայրկեան, երբ այնքան առատ է պայթուցիկ նիւթը՝ ազատութեան հրդեհը վառելու համար...

Ժամանա՜կ է, որ բաժան-բաժան գործողութիւնները միանան ընդհանուր ու կործանարար մի հոսանքի մէջ. Ժամանա՜կ է, որ կայսրութեան բոլոր դիմադրական կուսակցութիւնները՝ առժամապէս մի կողմ թողնելով հեռու ապագայի իրենց իղձերը՝ համերաշխ ու բուռն գործակցութեամբ ձգտեն նախ և առաջ յաղթահարել այն ահարկու հակառակորդին—ցարի՜զմը—որը խեղդում է նրանց բոլորին, հանդիսանալով մի այլանդակ անախրօնիզմ քաղաքակրթութեան պահանջների դիմաց։

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՀԱՅՈՒՀԻՆԵՐ

Հայուհի՜, յեղափոխակա՜ն։

Ժամանակ չէ՞ միթէ, որ այդ երկու բառերը, այսքա՜ն տարիներ հեռու իրարից, բաժանուած և՛ կեանքի և՛ գրականութեան մէջ, մերձենային ու ձեռք ձեռքի տուած նոր ճամբայ բանային իրենց համար՝ Արեան երկրի ազատագրութեան ուխտը, բայց յորդական պատմութեան մէջ... Երազական ցանկութի՞ւն է արդեօք այդ, յղացած մեր երևակայութեան մէջ, թէ հնարաւոր և նոյնիսկ շուտով իրականացնելի մի միտք, որ արմատներ ունի հայկական իրականութեան աշխարհում և սպասում է յարմար մօմենտների՝ առողջ շիթեր արձակելու համար։

„Քանի մը շաբաթ առաջ—գրում է երկրի մէջ գործող մեր ընկերը—աարօնցի մի կին մեզի ղրկած էր դրօշակ մը՝ հետեւեալ նամակով, որու պատճէնը ձեզ կ'ուղարկեմ հրատարակելու՝ իբրև նմոյշ մը մեր իգական սեռի յեղափոխական զգացմանց.

Սասունի յեղափոխական խմբին.

Ի սրտէ ձեզ յաջողութիւն ցանկացող եւ ջերմագին բարեմաղթութիւններ ընող կնոջէ մը կըստանաք ռուզմաքեայ նուէր մը, այն է հայ յեղափոխական դրօշակ մը, զոր գիշերուան աշխատութեամբ աւարտած եմ։ Այո, կ'արժէ, որ դուք ալ սրտանց ուրախանաք ո՛չ թէ դրօշին, որ ձեր արժանիքի նկատմամբ չնչին նուէր մըն է, այլ այն սուրբ գաղափարներու արդիւնաւորման, որ այսօր նոյնիսկ այս խաւարեալ աշխարհը թունդ հանած է։ Այսու պիտի քաջալերուիք. մեր աղօթքներ եւ բարեմաղթութիւններ, յուսամ, պիտի վահան ըլլան ձեզ, եւ պիտի լաւ յիշէք, որ ձեզ համար մեռնող քոյրեր ալ ունիք։ Կը վերջացնեմ գրութիւնս այն տողերով, որ ասեղնագործած եմ դրօշին վրայ՝

„Ահա, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լուացի“։

Ցարատեւութիւն, կարողութիւն եւ յաջողութիւն մաղթող քոյրերնիդ՝

Զ....

Ուշագրաւ մի վկայագի՞ր է արդեօք այդ անպաճոյճ, իր պարզութեամբ հրապուրիչ նամակը, իբրև արձագանք արթնացող ըմբոստացման, թէ՝ մի բացառիկ մտակոթիլ, որ հովերը բերեցին և հովերն էլ կը տանեն։ Ի՞նչ է դա։ Արդեօք նամակագիր հայուհու սրտի մի անցողական թրթի՞ռ, թէ՞ յուսաբեր գարնան մի նշան, որ աւետում է զգացմունքների նոր պայթիւն, անգործ մնացած մի ամբողջ շրջանի դիւթիչ վերածնութիւն։

Ահա հարցը։

Ինչո՞ւ թագցնենք իրականութիւնը։

Չէ՞ որ նոյնիսկ աղէտի օրերին, երբ հայկական հորիզոնի վրայ փայլատակեց դժբախտութիւնը իր ամբողջ մեծութեամբ, երբ արտասուքն ու արիւնը միմեանց խառնուեցին այն ձորակներում, որոնք դեռ բիբլիական բանաստեղծութեան օրերին գեղանիքի և բերկրութեան որրան էին նկատւած, այն տարիներին, երբ արթնացող ազատութեան հնոցի մէջ բողոքող յեղափոխականի, ֆէդայու և ռազմիկի տիպն էր բիւրեղանում—չէ՞ որ, ասում ենք, դժբախտութեամբ այդ մեծ տարեշրջանում՝ հայուհին, այնքա՜ն յուսատու գրքերի մէջ, մնաց չէզոք, անտարբեր, անմասն...

Մեզանից քառորդ դար առաջ, երբ քաղաքական փոթորիկների նշաններ չկային և հայկական մտաւոր վերածնութիւնը իր խաղաղ գնացքն էր կատարում, ինչպէս Արարատի այնպէս և Վասպուրականի ու Տարօնի սահմանների վրայ, հայ կինն էլ հանդէս եկաւ, թէև փոքր ինչ զգուշութեամբ՝ և գցեց իր լումն այդ շարժման գանձանակի մէջ։ Նա տուեց վարժուհու, հասարակական գործողի, նոյնիսկ գրողի տիպարներ։ Եւ տիկիններ Տիւսաբ, — իբրև գրող, Արծրունի և Եւանգուլեան, — իբրև հասարակական գործողներ, Միրզոյեան — իբրև թարգմանիչ, Ներսիսեան—իբրև վարժուհի և մի խումբ ուրիշներ, շատերը կենդանի, մանաւանդ նրանք, որոնք տարւած մանկավարժական-հասարակական գործունէութեան խաղաղ գաղափարով, Ն. Պոլսից կամ Թիֆլիսից չեցին դէպի Ատրպատական, Էրզրում, Սեբաստիա, դէպի հեռաւոր կէտեր, ինչպէս Կիլիկիա և Սալմաստ — կը մնան իբրև սփոփանքի փաստեր մեր փոթորկալից կեանքի նորագոյն էջերի մէջ...

—

Բայց այդ շրջանը անցաւ. եկաւ քաղաքական կեանքը իր մեայլ պահանջներով, յեղափոխական տարեշրջանը՝ իր արիւնոտ նկարագրով։

Յեղափոխական տարեշրջան—լի արկածներով, դժբախտութեամբ, բայց և հարուստ հեռանկարներով, որոնք սիրտ են տալիս, հոգի են ամրապնդում, թմրութեան տեղ կեանք ու շունչ են տարածում։ Բողոքի և ապստամբութեան պատասխանատու օրեր, ցնցումն մարող հայութեան։ Ժողովրդի ծոցում երևացին քարոզիչներ. լեռների լանջին հանդէս եկաւ ֆէդային։ Հրդեհւած գիւղերի շէմքին՝ կամաւոր ռազմիկը, իսկ մեծ քաղաքներում մեծ դահիճների դիմաց՝ ռումբաձիգը։ Համատարած լռութեան մէջ հնչեց ապստամբութեան կոչը, քաղցրահնչիւն երգը՝ շղթայակապ ազատութեան։

Ի՞նչ զգաց հայուհին։

—?...

Եկան փորձութեան օրերը, յուսահատական դառն օրեր, երբ թշնամու հարւածները, սրտապնդւած երևելի և աներևոյթ գործակիցների յորդորներով, արտասուք ու մահ էին տարածում հայկական անդէն աշխարհի բոլոր ծայրերում,—յոշոտած կալանաւորներ „զնդանների“ մէջ, վերածածկ մարտիկներ եկեղեցիների գաւիթներում, ապլստամբ գիւղեր՝ առանց կապարի ու առանց հացի, հալածական պրոպագանդիստներ անապատում, առանց անկիւնի— սոսկումի և լքման աղէտաբեր օրեր, երբ պահանջւում էր գերբնական ճիգ՝ խորտակելու զինադադարի քարոզը, վերստին հնչեցնելու յեղափոխական ռազմի երգը...

Ի՞նչ արեց հայուհին։

Երգերի մէջ շատ բան, կեանքի մէջ՝ շատ քիչ։

Շուտով կէս դար կը լրանայ, ինչ սերունդ սերունդի յետևից, տխուր և ուրախ ժամերին դայլայլում է՝

„Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լւացի“...

Քառորդ դար է արդէն, ինչ ազգային խնջոյքներում, ընտանիքներում և հասարակութեան մէջ պարծանքով հնչեցնում են՝

Հայ տիկինը ստիպում է ամուսնուն գնալ
Պատերազմի դաշտի վրայ վերք տալ, ստանալ.

և ուրիշ աննման, կլասիկական մտաւորութեամբ հիւսւած խօսքեր, որոնք բիբլիական եդեմի առատ գինու ընկերակցութեամբ սահում են հայկազն շրթունքներից, ուղեկցւած որոտընդոստ ծափահարութիւններով, ինքնագոհութեան բուռն ցոյցերով...

Իսկ իրականութեան մեայլ հրապարակի վրայ, այդ գեղեցիկ դայլայլիկների անմիջական դրացիութեան մէջ, ուր զոհերի արեան հետ միասին հոսում է կենդանի մնացածների աղի արտասուքը, չերևաց, մարմին չառաւ, չըստեղծուեց տիպը այն հայ աղջկայ, որի շրթունքները մրմնջում էին „Ահա եղբայր քեզ մի դրօշ“, և տիպական ներկայացուցիչները այն հայ կնոջ, որ հերոսական շարժումով

„Ստիպում է ամուսնուն գնալ,
Վերք տալ, ստանալ“...

—մեծագործ անձնազոհութեան պատկերը, որ աւաղ, իր ամբողջ վեհութեամբ հանդերձ, մնաց արիւնոտ ազգի մէջ՝ թղթի վրայ, իրականութիւնից հեռու, երաժշտական յոյզերի մէջ միայն, եթերական տարածութեան սահմաններում։ Եսթերը — Տարօնի դիւցազնուհին — մնաց բացառութիւններից մէկը...

Սասուն, Բասեն, Զէյթուն, Խանասոր,— գեղեցիկ, բայց անմարմին յորջորջումներ հայ կնոջ համար, հաճելի նրա երևակայութեանը, բայց անցողական նրա մտքի, զբաղմունքների, նրա յոյզերի և հոգեկան տառապանքների աշխարհում։

Սերոբ, Բաբկէն, Պետո, Կարօ, Հրայր— ախորժալուր անուններ, հաճելի նկարների վրայ, երգերի մէջ, ընկերական խնջոյքներում, բայց միշտ վերացական, օդի մէջ հեռու, շատ հեռու ամենօրեայ խոհերից, անուններ, որոնք չը մարմնացան հայուհու մտածողութեան մէջ, չը դարձան նրա դրական տանջանքների առարկան, այն աշխարհային „իդէալը“—դէպի որը, ինչպէս դէպի լոյսն ու ջերմութիւնը, անյուլաբար ձգւէր հայուհին՝ կանացի զգացմունքների ամբողջ ուժով, այն թռիչքով, որոնք սովորական մահկանացուներին դարձնում են արտակարգ ուժեր, սաւառնող դէպի հերոսութիւն, դէպի հերոսական պանթէօն...

Հայդուկ, ֆէդայի, ռազմիկ, տէռօ-

ր ի ս տ,— այնքա՛ն թովիչ յեղափոխական գրականութեան մէջ և գաղտնի ժողովներում, մնում են, աւա՜ղ, լոկ „հաճոյքների" շրջանակում, որոնք գրաւիչ են քանի հեռու են և տեղ չեն գտնում այն սիրուն գլուխների մէջ, որոնք քսանհինգ տարուց աւելի է „Վիրակապ են հիւսում իրանց մազերից"...

—

Նոր օրերը նոր ցաւեր բերեցին։ Ահա յեղափոխական կեանքը՝ դաժան, հրամայական պահանջներով։ Գետերի ջրերը արեան փոխուեցին, բայց հայուհին մնաց մեկուսացած, անտարբեր, և նոյն իսկ աննպաստ տրամադրուած։ Նա դրօշ չտուեց եղբօրը և ոչ էլ հրացան՝ ամուսնուն։ Նրա ձեռքը չդիպաւ վրիժառու դաշոյնին և ոչ էլ յեղափոխական գրչին։ Նրա բերանից չհոսեց կրակոտ, բոցբոցող խօսքը, նրա գլխի մէջ բուն չդրեց յաղթանակութեան հրդեհը, մեծագործութեան այդ սքանչելի սաղմը։

Մեծ-Յեղափոխութիւնը ունեցաւ իր Տիկին Րօլան, իր Շարլօտ Կօրդէյ։ Սլավ. ցեղի վշտերը ծնեցին Օրիորդ Պերովսկայաներ։ Յուլիսի արիւնոտ օրերին՝ կինը պայքարի աջ թևն եղաւ։ Մակեդոնական „չէտաների" մէջ՝ առնական զգեստով՝ դաշոյնով զարդարած մակեդոնուհին հիացման դասեր տուեց թշնամուն...

Իսկ հայուհի՞ն։

Նա ողբաց, արտասուքի հեղեղ թափեց, սոսկումի վայրկեաններին գլորեց իրեն ժայռերի ծերպերից, տանջանքը հերոսութեան հասցրեց—բայց չեղաւ ազատութեան հերոսուհի, և ոչ էլ այն կ ա յ ծ ը, որ սրտեր է հրդեհում, թռիչք ու ուժ տալիս քնած մտքերին...

Չը դարձաւ ազատութեան երգիչ պրօպագանդի վայրերում և ոչ էլ ռազմիկի ընկեր՝ լեռան ծայրերին. չը հագաւ ֆէդայու զգեստը, և ոչ էլ վրիժառու դաշոյնին դիպաւ նրա ձեռքը։ Պ ա տ ր ա ս տ ո ւ թ ե ա ն օրերին մնաց թմրած, աղետի օրերին՝ սոսկման ենթակայ, անաջողութեան շրջանում՝ չարագուշակ մարգարէ...

Իսկ կեանքը պ ա հ ա ն ջ ն ե ր է առաջադրում, հրամայական, մեծ, խորհրդաւոր պահանջներ, որոնք հրաւէրի կոչ ու երգեր են հիւսում, ուղղած հայ կնոջ, հայ ուսանողուհուն, հայ օրիորդին։

Այդ կոչն ու հրաւէրը բանաստեղծական դայլայլիկներ չեն, երաժշտական քաղցրանքով համեմած, այլ ազատութեան կուռով տանջուած ժողովրդի տագնապի ձայն, որ ինչպէս սրբազան պատգամ՝ հնչում է աւերակների երկրից, ողբալից ու մելամաղձոտ...

Մի՞թէ հայուհին չի լսում...

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՌԻՒ

ԱՂԹԱՄԱՐԻ ԿՌԻՒԸ

Վան, 31 օգոստոս

Սասունի ռազմիկ Անդրանիկը, Գէորգ Չաւուշի, Իշխանի ու Մուրատի հետ 70 հոգով Տարօնից անցաւ Աղթամար։ Երբ կառավարութիւնը իմացաւ, կարգադրեց պաշարել կղզին թէ ցամաքից և թէ ծովից։ Մի քանի օր տևեց պաշարումը. մի քանի հարիւր զինուորներ, թնդանօթներով ու մի քանի նաւերով առաջ են խաղում ծովի վրայ՝ կղզին ռմբակոծելու և Անդրանիկին իր խմբով բռնելու կամ կոտորելու նպատակով։

Առաւօտեան, մօտ ժամը 10-ին թիւրք զօրքը կրակ է բաց անում՝ յեղափոխականների վրայ։ Անդրանիկը տնկել է տալիս Սասունի կռւի կարմիր դրօշակը և կարգադրում է դիմադրութիւն սկսելու ծովափի վրայ, ցոյց տալու, որ հայ ֆէդային գիտէ նաւերի դէմ էլ կռուել այնպէս, ինչպէս սարերում ու ձորերում։ Թնդանօթի ահեղագոռ ռումբերին՝ մերոնք պատասխանում են մօսինի գնդակների տարափով։ Թշնամին տեսնելով, որ իր ռումբերը չեն կարողանում ծառայել իրենց նպատակին այնպէս, ինչպէս հակառակորդի գնդակները, մի երկու ժամուայ կռւից յետոյ՝ ստիպուած է լինում յետ նահանջել, աւելի մեծ պատրաստութեամբ յարձակումն գործելու համար։

Մի քանի ժամ անցած՝ ահագին քանակութեամբ ջուալներ աւազով լեցրած՝ դարսում են նաւերի վրայ և նորից սկսում՝ ռմբակոծել։ Այս անգամ կռիւը տևում է մինչև երեկոյ։ Մութը կոխելուն պէս՝ մերոնք նաւակներով դուրս են գալիս ծովը և ծովի վրայ կռւում, մինչև որ յարմար րոպէ են գտնում և ապաստանում Վան...

Կռիւը շատ տպաւորիչ էր. մերոնցից ամբողջ օրուայ կռւի ընթացքում վիրաւորւում են երկու հոգի, սպանւում է 19 տարեկան մի պատանի. Թշնամու կորուստը անցնում է 15-ից։ Արձակած ռումբերի թիւը 30-ից աւելի է։

Մի քանի օրից յետոյ Գէորգ Չաւուշը 20 հոգով վերադառնում է Դաշտը՝ ժողովրդին օգնելու համար, իսկ Անդրանիկը 50 հոգով մնում է Վասպուրականում։

Վան, 12 սեպտեմբեր

Աղթամարի կռւից Վան ապաստանած հայ հայդուկները տեղաւորւում են մի շինութեան մէջ, և դրաւում են յարմարագոյն դիրքեր։ Թիւրք կառավարութիւնը զօրք և թնդանօթներ է դնում այդ դիրքերի մօտ և կողմնակի կերպով լուր ուղարկում, որ ապստամբները հեռանան քաղաքից։ Անգլիական հիւպատոսի բացակայութեան պատճառով՝ նրա տեղապահ ամերիկական միսիոնար դոկտ. Աշըր տեսակցում է մեր ընկեր Կոմսի հետ, յայտնում է թէ կուսակալը պահանջում է, որ ինչքան դրսեցիներ կան քաղաքում (թւով 14 հոգի) պէտք է հեռանան, „որպէսզի ի զուր տեղից ժողովրդի կոտորած չառաջանայ"։ Կոմսը պատասխանում է, որ „Դրսեցիներ չկան, այլ կան երկրացիներ, որոնք զէնքը երբէք վար չեն դնի, քանի որ կեանքի և գոյքի ապահովութիւն չկայ"։ Բացի դրանից պահանջում է, որ կոտորածի վախից հիւպատոսարաններում և դպրանոցում ապաստանած ժողովուրդը հեռացուի այդ տեղերից և ցրուի իրենց տները։ Պէտք է նկատել, որ քաղաքը ամբողջովին դատարկուած է եղել և ապաստանած յիշեալ տեղերում։ Դոկտ. Աշըր անմիջապէս գնում է կուսակալի մօտ բանակցութեան համար, իսկ Կոմսը պատրաստում է կռւողներին՝ հարկաւոր դէպքում դիմադրելու նպատակով։ Երկու ժամից յետոյ բանակցողը լուր է ղրկում, որ հիւպատոսները հեռագիրներ են տուել Կ. Պօլիս և կուսակալն էլ ստորագրել է, թէ Վանում դրսեցի յեղափոխականներ չկան։ Դրանից անմիջապէս յետոյ զօրքերն ու թնդանօթները հեռացւում են։ Զանազան տեղեր ապաստանած ժողովուրդը վերադառնում է իր տեղը։ Դոկտ. Աշըրը լուր էր ուղարկել, որ առայժմ ոչինչ չպիտի լինի, բայց 8-10 օրից յետոյ կ'սկսուին խուզարկութիւններ։

Կ. Պոլսից ստացուած հեռագրի պատճէնը. „Ձեր հեռագիրը ստացել ենք, Դրան հետ բանակցեցինք։ Ապահովացուցէք ժողովուրդը, թող իրենց տեղերը երթան“։

Վանի շուկան մի շաբաթ փակուած էր. ջան-բէզարների վոհմակը վխտում էր քաղաքում։ Դէպքից յետոյ Վանը առժամանակ խաղաղուած է։

ՍԱՀՄԱՆԱԳԼԽԻ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

Յունիս 6-ի գիշերն էր։ Որոշած էինք, որ այդ գիշեր բոլորս էլ հաւաքուենք, որպէս զի օրհնել տանք դրօշակը։ Գիշերուայ ժամը 11-ին մենք արդէն խմբուած՝ սպասում էինք։ Ամբիոնի առջևը դրուած էին դրօշակը, մօտիկի հրացան և սուր։ Դրօշակի մէկ երեսին նկարուած էր Դաշնակցութեան զինանշանը, որի վերևի մասում գրուած էին հետևեալ խօսքերը մեծ տառերով. „Վրէժ, վրէժ“, իսկ ներքև՝ „Մահ կամ ազատութիւն“։ Միւս երեսին մի կատաղի առիւծ հետևեալ մակագրութեամբ. „Մեղքը մերը չէ՛, անէ՛ծք դուշմանին, նա պարզեց դրօշը արիւնոտ մարտին“։ Բոպէն խորհրդաւոր էր, ազդու։

Երդումը կատարուելուց յետոյ՝ առաջ եկաւ հայդուկ Սաքօն, նախկին ուսանող, կարճ կերպով նկարագրեց երկրի դրութիւնը և խմբի պարտականութիւնները, և խօսքը ուղղելով խմբապետ Դուսմանին, աւելացրեց. „Մեզ այստեղ հաւաքել է ոչ միայն հայրենասիրական զգացմունքը, այլև մի ամբողջ ազգութեան բռնաբարուած իրաւունքի գաղափարը, և յանուն այդ գաղափարի՝ մենք պարտաւոր ենք ամէն բան անել“։ Ապա առաջ եկաւ մի բժիշկ, ծագումով Թիւրքահայաստանցի և մեզ մաղթեց բարի երթ...

Միւս օրը արևամտին արդէն պատրաստ էինք ճանապարհ ելնելու։ Խումբը բաժանուած էր երկու մասի, որոնք իրար պէտք է հանդիպէին Ղ. և Ա. գիւղերը միացնող ճանապարհին։ Մէկ տիկին վարդի փունջ էր բերել և իւրաքանչիւր հայդուկի փամփուշտամանների արանքն էր դնում իր ձեռքով։ Դուրս եկանք փողոց։ Գիւղացիներից շատերը իմացել էին մեր այդ տեղով ճանապարհելը և դուրս էին եկել բարի երթ մաղթելու։

Վերջին անգամ համբուրում ենք և ապա առաջ շարժւում։ Բոլորս էլ ձիաւոր էինք։ Ամենից առաջ գնում էր քիւրդ վալատը Մստոն, վանեցի վալատ Աւտոյի հետ միասին. նրանցից քիչ հեռու երեք առաջապահներ, ապա կենտրօնը, բաղկացած տասն հոգուց. կենտրօնից յետոյ երկու ձիաւոր, ապա ամենից վերջը մի ձիաւոր։ Եթէ վալատը նկատէր ոևէ վտանգ, նա իսկոյն և եթ պէտք է յայտնէր իրեն հետևող երեք ձիաւորներին, և ինքը դառնար ու միանար կենտրօնի հետ, իբրև ամենակարևոր անձնաւորութիւն, որպէս զի նա ըստ կարելւոյն դուրս լինէր վտանգի շրջանից։

Առաւօտեան լուսածագին արդէն հասել էինք Բրդաբանի ամենաբարձր լեռնավայրերին, ուր ամառուայ այդ ամսին դեռ ևս բաւականին ձիւն կար։ Վալատը առաջնորդում էր բարձր լեռների վրայ գտնուող մի փոքրիկ գոգաւոր տեղ, վստահեցնում, որ այնտեղ ապահով է, և ամբողջ օրը կարող ենք անցկացնել, ձիաները արածացնել և ապա գիշերը նորից շարունակել ճանապարհը։ Տեղաւորուելուց յետոյ խմբապետ Դուսմանը ուղարկում է երկու խումբ՝ զանազան բարձրութիւններ հսկելու։ Դեռ ևս մի քանի տասնեակ րոպէ չ'անցած, յանկարծ նկատեցինք, որ ձորից ոչխարի հօտ է բարձրանում դէպի մեր թագնուած դիրքը։ Ի՞նչ անել։ Բռնե՞լ արդեօք հովիւին և պահել մինչև երեկոյ. բայց չէ՞ որ եթէ կէսօրին ոչխարը չգնայ գիւղ՝ գիւղացիները բնականաբար կը կարծեն թէ ոչխարները թշնամուց տարուել են, հաւար կը լինի և ուրեմն կռիւը անխուսափելի, իսկ մենք ամենևին տրամադիր չէինք կռուելու, ունենալով որոշ ծրագիր։ Ուստի վճռուեց ուղղակի քրդերէն լեզուով յայտնել հովիւին, որ հօտը չբարձրացնի դէպի մեր կողմը։ Մի քանի րոպէ հազիւ անցած, միւս դիրքից էլ մարդ է գալիս և պատմում, որ բազմաթիւ ոչխարների հօտեր են գալիս դէպի իրենց։ Նոյն բանը անուում է և այդ կողմի վերաբերմամբ։ Հովիւները մեր ներկայութիւնը ի հարկէ յայտնում են իրենց ցեղապետներին, բայց բարեբախտաբար ոչ մի ընդհարում տեղի չէ ունենում։ Մեր դիրքից աւելի բարձր լեռների վրայ երևում էին դէմքեր։ Քիւրդ վալատը խորհուրդ է տալիս վերադառնալ, ասելով, որ 3 օրից յետոյ ուրիշ գծով կը ճանապարհուենք. նրա կարծիքով տեղական քրդերը արդէն լուր ուղարկած պիտի լինեն սահմանի այն կողմը, և այսպիսով աշիրէթները նախօրօք բռնած կը լինեն բոլոր ճանապարհները։ Խմբապետը պատասխանում է, թէ երեկոյեան կը մտածենք, և դեռ արևը մայր չմտած, կարգադրուեց ճանապարհը շարունակել։ Եւ մենք զարտուղի ճանապարհով շարունակեցինք մեր ընթացքը։

Իջնում ենք դէպի անդնդախոր մի ձոր, ուր քիչ յետոյ սկսում է մի երկար ու նեղ կիրճ, երկու կողմից սեպաձև լեռներ, ներքևում վազում է գետակը, որի եզրով մենք առաջ ենք շարժւում։ Վտանգաւոր էր վայրը. բաւական է մի քանի հոգի, նախօրօք յարմարաւոր տեղեր գրաւած, որպէս զի կարելի լինի հարիւրաւոր մարդկանց ոչնչացնել։ Խմբապետը նշան է տալիս, որ պատրաստ լինենք։ Մօտ է կէս գիշերին։ Հասնում ենք ցանած տեղերի, լսւում է շների հաչոց, որ նշան էր, թէ մօտիկ տեղերում գիւղ կայ։ Ծռում ենք ճանապարհներս, կրկին անգամ դիմում դէպի լեռներ, ապա նորից դէպի ներքև՝ վտանգաւոր շաւիղներով։

Սատանայական, դժոխային ճանապարհներ։ Երբ աչքովդ տեսնում ես, թէ որպիսի՜ դժուարութիւններով են մեր հայդուկները գնացել դէպի երկիր, ի՜նչ զոհաբերութիւններ, ի՜նչ զրկանքներ են կրել, այն ժամանակ միայն զգում ես, թէ ի՜նչ խորին պատկառանքի են արժանի այդ անձնուէրները։ Եւ որպիսի՜ յիշողութիւններ։ Այս նոյն լեռներովն են գնացել Վարդանն ու Դուսմանը, Սէմէրճեանն ու Վազգէնը, Շէրօն ու Զաթօն, և ի՜նչ վտանգների, ի՜նչ կռիւների միջից անցել։ Պատահել է, որ հէնց առաջին քայլից սկսել է կռիւը և շարունակւել մինչև Վանի պատերի տակը, երբեմն մինչև Շատախ։

Բայց չշեղուենք։ Առաւօտ է։ Դեռ լոյսը հազիւ է բացւել և մենք արդէն տաճկական Քրդստանում ենք. խումբը առաջ է անցել և միայն յետնապահները բաւական յետ են մնացել։ Լսւում է մի ինչ որ ձայն. ոմանք կարծում են, որ հաւար են կանչում։ Մենք ասպանդակում են ձիաները և հասնում ընկերներին։ Խմբապետն էլ է ասում, որ ձայնը հաւարի է և վալատին հարցնում է մի քանի տեղերի անուն՝ դիրք բռնելու համար։ Ապա կրկին անգամ առաջ ենք շարժւում, մտնում ձորը և

երեք քառորդ ժամից արդէն հասնում ենք յարմարաւոր վայր։ Ընտրում ենք դիրքերը, խումբը բաժանւում է եռեակների։ Սահմանագլխի կռիւը չէր խմբի նպատակը, բայց և այնպէս, եթէ այդ անխուսափելի էր, ցանկալի էր, որ որքան կարելի է երկրի խորքում տեղի ունենար։ Խմբապետը կատակով նկատում է. „այսօր մի քիչ վառօդի հոտ կը քաշենք, իսկ վաղը աւելի լուրջ ընդհարում կ'ունենանք“։ Զորակի արևելեան կողմի բարձրութիւնները պէտք է մեր տրամադրութեան տակ լինէին, իսկ արևմտեան սարերը ազատ և Թշնամին էլ այն կողմից պէտք է դար. արևելեան դիրքերն էլ մէկ-մէկից բաժանւում էին մի ձորակով՝ հարաւային և հիւսիսային։ Հիւսիսային ամենաբարձր դիրքը, որը գերիշխում էր միւս բոլոր դիրքերի վրայ, պէտք է բռնէր խմբապետի օգնական Ադաշը իր երկու ընկերներով, հարաւայինը Սարբաշը՝ երկու ընկերներով, իսկ մնացածները այդ նոյն բարձրութեան զանազան աստիճանների վրայ. Մատօն, վալադ Խէչօն և ուրիշ երկու տղաներ պէտք է ձիաները պաշտպանէին Թշնամուց, մի ապահով տեղ, ձորակում։

Մինչ այդ ոչինչ ձայն չէր լսւում. կարծում էինք թէ այլևս կռիւ չի լինիլ։ Բայց յանկարծ լսեցին հրացանի ձայներ. գնդակները թափւում էին դէպի ձիաները, դիրքերից հեռացածները վազեցին դէպի իրենց տեղերը։ Լսւում է խմբապետի հրամանը. „Տղե՛րք, կրակեցէ՛ք“։ Նրանք, որոնք ուէ պատճառով հեռու էին եղել ամուր դիրքերից, վազում են յարմարաւոր տեղեր բռնելու։ Հրացանաձգութիւնը քանի գնում աւելի է տաքանում, ներքևից տղաները սկսում են „Կռւեցէ՛ք, տղերքը“, որը շարունակաբար բարձրանում էր դիրքից դիրք և դառնում ընդհանուր։ Հեռու դիրքերից լսւում էին երգի ուժեղ շեշտերը, ապա հրացանների որոտները։

Կռիւի ամենատաք ժամանակ երևում է վանեցի վալադ Աւտօն. նա գալիս էր հեռուից, ձիաների մօտից։ Եղած է 5-6 կռիւներում և ստացել է շատ վտանգաւոր վէրքեր։ Ահա նա, չափազանց հաստատ քայլերով, գնդակների տարափի տակ, բարձրանում է. մենք շտապեցնում ենք, որ շուտ դիրք բռնի, բայց նա ոչ միայն չէ արագացնում քայլերը, այլ կռանում և հաւաքում է մի ընկերոջ ծոցից թափւած թղթերը և յիշատակարանը։ Անսասան էր նա...

Կռիւը արևմտեան կողմից է. քրդերի մէկ մասը մեզ զբաղեցնում է նախօրօք իրենց համար ընտրած ամուր դիրքերից, որպէս զի միւս մասը իջնի գաղտնի կերպով ձորը, բռնելու մի քանի լաւ դիրքեր, և եթէ կարելի է, շրջան անել և շրջապատել մեզ նաև արևելեան կողմից։ Տղաներից մէկը այդ նկատում է և ձայն տալիս Սարբաշին, որ զգոյշ լինի։ Արդարև, չանցած մի քանի րոպէ, ձորը լցւում է քրդերով, և մի քանիսը ազատ կերպով բարձրանում են դիրքեր գրաւելու։ Բոլոր կողմերից տղաները հրացանները պարպում են դէպի այդ կողմը։ Մօտ երեք քառորդ ժամ տևում է հրացանաձգութիւնը և միանգամ ընդմիշտ ապահովւում է այդ կողմը։

Ցանկարծ, անսպասելի կերպով, արևելեան կողմից, որը կարծւում էր թէ կը պաշտպանի Ադաշից, երևում են քրդեր. մէկը վազէ վազ հասնում է մի մեծ ժայռի և դիրք բռնում. եթէ այդտեղ հաւաքւէին էլի մի քանիսը, մեր դրութիւնը անտանելի կը լինէր, կը մնայինք երկու կրակի մէջ։ Այդ բանը նկատում է ընկերներից մէկը և իսկոյն ձայն է տալիս ձիաների մօտ եղած ազատ ընկերներին և վալադ Խէչօյին. Խէչօն հասնում է, բայց մեր տղաները դիրք չունէին։ Մի քիչ հեռու լաւ դիրք կար, պէտք կար այն բռնելու, ուստի վճռւում է, որ Խէչօն կրակ բանայ, որպէս զի միւսը կարողանայ անցնել և բռնել դիրքը։ Ապա նա դիրքից կը կռւի և Խէչօյին դիւրութիւն կը տայ իր մօտ գալու։ Այդպէս էլ անում են։

Քրդերի բռնած առաջին դիրքից մօտ յիսուն սաժէն այնկողմը երևացին նոր մարդիկ, մէկը ձիաւոր։ Վալադ Խէչօյի գնդակից մէկը գլորւեց, արտասանելով այս խօսքերը. „Հայր, ես ընկայ“։ Այդ միջոցին քրդերից մէկը գոչում էր. „Աղա, մեզ բերում կոտորել էք տալիս“, և կամենում էր փախչել, բայց մի քանի քայլ չարած, նա էլ ընկաւ...

Շուտով լուր եկաւ, որ մեր ընկեր Սերոբը, ենթասպայ, գնդակ է ստացել ճակատից։ Նրա մահը կարծես մեզ ուշքի բերեց, և սկսեցինք հետաքրքրւել խմբապետի վիճակով. նա, օգնականը, բժիշկը և վալատ Աւտօն չէին երևում իրենց նախկին դիրքում։ Քրդերը մի քանի անգամ մօտեցել էին նրանց տեղին, մենք սկսում ենք կանչել, ձայն տալ, բայց ոչ մի պատասխան։ Մի ինչ որ անորոշ ծանր զգացում տիրում է բոլորիս։ Արդեօք սպանւե՞լ են...

Մութը ընկնում է. տղաները կամաց կամաց իջնում են ձորակը, շարունակ լսւում է բօռի ձայնը. կռիւը արդէն շատ մօտ տարածութեան վրայ է. ընկերներից մէկը արդէն մաուզէր ատրճանակն է գործ ածում. միջոց չտալու համար քրդերին բարձրանալու։

Խմբապետը իր հետ եղած ընկերներով չկայ. առանց նրան ճանապարհը շարունակել ոչ մի միտք չունի. եթէ խումբը ցանկանայ էլ, վալադները չեն առաջնորդի. մնում էր վերադառնալ Պարսկաստան. էլի մի քանի անգամ ձայն ենք տալիս խմբապետին և ընկերներին—ոչ մի պատասխան։ Զորը չորս կողմից շրջապատւած էր։ Նախ քան ամբողջ խմբի դուրս գալը՝ հարկաւոր էր, որ հինգ հոգի բարձրանային և դիրք բռնէին, այդ հինգից Սարբաշը և դրօշակակիր Խէչօն ինչ որ պատճառով յետ են մնում։ Իսկ երեքը բարձրանում են թէ չէ, իսկոյն և եթ հանդիպում են կանոնաւոր զօրքին և քրդերին. մի քանի գնդակ փոխանակելուց վերջը, յաջողւում է նրանց անյայտանալ Թշնամուց։

Երբ մենք բարձրացանք՝ մեզնից մէկը նկատեց կանոնաւոր զինւորներին և քրդերին՝ մօտ 15-20 քայլ հեռաւորութեան վրայ։ Նրանք կրակ բաց արին. նրանց ուղղելով մեր գնդակները՝ ճանապարհ բացինք և իջանք աւելի ներքև։

Քառորդ ժամ չանցած, էլի մեզ ուղղում են գնդակների տարափ։ Ահագին տարածութեան վրայ կարևոր կէտերում կանգնած են զօրք և քրդեր։ Մեր ձիաները սլանում էին, և մենք երբեմն-երբեմն էինք կրակում։ Մօտ երեք ժամ անընդհատ գնում էինք դէպի Պարսկաստան։

Հետևեալ օրը երեկոյեան, մօտաւորապէս ժամը երեքին պարսկական Քրդարանի բարձր լեռներից մէկի վրայ ենք։ Տղաները տխուր են և մռայլ. խմբի իր նպատակակէտին չհասնելը, երկու ընկերոջ կորուստը, երեք ընկերների բաժանելը, խմբապետի և միւսների անյայտ վիճակը, լցնում էին տրտմութեամբ բոլորի սրտերը։ Սակայն այդ դրութիւնը յուսահատական չէր, այլ մի նոր աղբիւր այն համոզմունքի, որ կռւով, միայն կռւով

կարելի է արդարութիւն հաստատել այն գեղանի, բայց դժբախտ երկրի մէջ։

Յանկարծ լսւում է քիւրդ վալատի մելամաղձոտ ձայնը. նա երգում էր ժողովրդական-յեղափոխական մի երգ, նորից յիշում ենք մեր խմբապետին, յիշում ենք բժշկին՝ այդ աշխոյժով լի անձնաւորութիւնը, որը թողել էր խաղաղ, հանգիստ կեանքը և ընտրել հայդուկի տաժանակիր դերը. յիշում ենք միւսներին ու տխուր նստում ձիերը. մեր մտքում ցտեսութիւն ենք ասում այս վեհ սարերին և ճանապարհներս շարունակում։

Շուտով հասաւ և խմբապետը իր ընկերներով։ Նոր դիրքերի մէջ կռւի բռնւած թշնամու հետ՝ նրանք աջողել էին ճեղքել թրքական շարքերը և անսովոր նեղութիւններով հասել սահմանագլուխ...

Վալադ Աւոծն կրծքից մի գնդակ էր ստացել և սպանւել։ Մենք երկու զոհ տւինք՝ ՍԵՐՈԲԸ և վանեցի ԱԻՏՕՆ։ Թշնամին ունեցաւ՝ 6 հոգի սպանւած, 2 վիրաւոր։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ԲՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԻ ՄԷՋ

(ՊԱՇՏՕՆԱԿԱՆ)

—

Տարօնի հայոց առաջնորդարանը ուղղել է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին՝ սուլթանի կառավարութեան գործած բռնութիւնների փաստական նկարագիրը, որը չնայած պաշտօնական գրութեան յատուկ չափաւորութեան, պատկերացնում է հայկական բազմատանջ գաւառի սոսկալի վիճակը։ Առաջ ենք բերում այդ նկարագիրը նոյնութեամբ։

—

1904, յունիս 28

Տարօնոյ դաշտին աւանդական եւ անսահման տառապանքները Ձեզ յայտնի են. Վերջին տասնութեան թուղթով անոր վերջին տարիներուն կրած վշտերը՝ այս անգամ կը փութամ մատուցանել համառօտ նկարագիրը սոյն այս յունուարէն սկսեալ՝ Խաչսի ժողովրդեան գլխուն հասած չարիքներուն։ Իրաւ՝ կատարածները մեծ թիւ չեն կազմեր, բայց արդէն Մշոյ եւ յարակից գաւառակներու հայերը կենդանի մեռեալներ են եւ իրենց տաժանակիր կեանքը սոսկալի մարտիրոսութիւն մ'է որ կը շարունակէ եւ երթալով եւս քան զեւս կը ծանրանայ։

Ահաւասիկ.

1894 յունուար 23. — „Ֆէդայի կայ“ ըսելով գիշերւայ ժամը 3-ին Մշոյ ժանտարմներու, թիւրքերու, Նորշէնի մէջ եղած զօրքերու ու շրջակայ քիւրդերու կողմէ յարձակում կ'ըլլայ Յունան գեղին վրայ. մեր ժողովրդին մէջ կը տիրէ սարսափ ու խուճապ։ Բոլոր տուները կը կոխւին, 21-է աւելի կիներ կը բռնաբարւին, գնդակով, խեղդամահ ու ցրտահար կը մեռնին 2 այր ու 4 հատ երեխաներ։ Ժողովուրդը կը ցրւի, առտնին ամէն գոյքեր, եկեղեցական ամէն սպասներ կը կողոպտւին, 4-500 անձինք կարօտութեան կը մատնւին ևն։ Այս խնդիր մեր փետրւար 2-ի տեղեկագրով բացատրած ենք, նոր մանրամասնութեանց պէտք չտեսանք։ Միայն կ'աւելցնենք, թէ նիւթական վնասը 60-70,000 ղուրուշի կը մօտիկնայ։

Յունւար 29. — Սէյտանցի Բաշէի Մօղիկ ըսւած քիւրդը հինգ ընկերներով ցորեկ կը յարձակի շէյխ-իւսուֆցի և սողգոմցի չորս անմեղ հայերու վրայ, որոնք իրենց նոր հարսը կը տանէին. աղջիկը կը բռնաբարւի, աղջկան հայրն և ազգականը կըսպաննւին ու սողգոմցի մ'ալ կը վիրաւորւի։

Մարտ 16. — Թշեցի Նասիպ ու Ֆաթէհ անուն շէյխերը տեղւոյն քիւրդերը կը գրգռեն իրենց բնակակից հայերը կոտորելու։ Յարձակումը տեղի կ'ունենայ մոլեգնաբար. կը վիրաւորւին Մըկըր Վարդանեան, Աւետիս Սրապեան, Աւետիսի հինգամեայ Մեսրոպ տղան, Տէր Աւետիս քահանան և Մուրատ Մելքեան. խոշտանգումներու չափը չկայ։ Խնդիրը աւելի պիտի ծանրանար, եթէ հայերը խոհեմութիւն չ'ընէին տուները փակել և դռները գոցել։

Մարտ 18. — Ոստիկան զինւորաց յիսնապետ 30 ձիաւորով Ծխավու գիւղը կերթայ. իր ոստիկաններէն Խըշօ և Խամօ, երեկոյեան, Զաչան Յարօյեանի տունը մտնելով՝ անոր յղի կին Լուսիկը կը բռնաբարեն։

Մարտ 22. — Խէյպիանցի Առաքել Տէր Աւետիսեանը, ցորեկ ժամը 5-ին Հերկերտ գիւղի մօտիկ կըսպաննւի Խսալը-Տահարզատէ Մէհմէտ Սէլիմէն, որ բարեկամութիւն կեղծելով հետը ընկերացեր էր։

Ապրիլ 3. — Ոստիկան զինւորաց յիսնապետը, տուրք հաւաքելու պատրւակով՝ Օրբնոց գիւղի մանկամարդ հայ կիները ախոռի մը մէջ կը ժողւէ, կը բանտարկէ, կ'անարգէ, բերանին բանալով մէջ կը թքցնէ, աղբ կը լեցնէ, զոմանս կը խոշտանգէ և ասկէ՝ Ոսկեանի յղի կինը իր զաւակը կը վիժէ։

Ապրիլ 9. — Զըրէքցի խուլ և համր Իզօ Մելքոնեան՝ Յունան և Սոխգոմ գիւղերու միջև կը բռնւի քիւրդերէ, որոնք անոր բերանը, ականջներն ու աչքերը տիղմ լեցունելով՝ տանջանօք խեղդամահ կ'ընեն։

Ապրիլ 10. — Աւրանցի գիւղապետ ծերունի Յակոբ Պօղոսեան իր արտերը այցելած ատեն՝ գնդակահար կըսպաննւի Պահճէ գիւղի քիւրդերէն։

Ապրիլ 21. — Զօրքերու կողմէ յարձակում Բերդակի վրայ, պատրւակելով թէ ֆէդայի կայ, գնդակահար կըսպաննւին Յակոբ Օհանեան, Մելքոն Գրոյեան, տասնամեայ աղջիկ մը՝ Նուրղիկ Սարգսեան. իսկ 67ամեայ պառաւ մը՝ Սալվի Ղահնազարեան, քսմնելի տանջանաց կ'ենթարկւի, սրածայր հաստ փայտեր մուրճով ներս անցունելով... ահաբեկ և խոշտանգւած կը մեռնին՝ Կիկօ Տօնէյեան, Մայրօ Մաթոսեան (որ զաւակն ալ կը վիժէ), Սրապիոն Անդրիասեան, վեցամեայ Կարիկ Մկրօյեան ջրին մէջ խեղդամահ կ'ըլլայ. յաջորդաբար կը բռնաբարւին Մարիամ Հլէեան. 50ամեայ Մաքօ Մաթօսեան, 25ամեայ Ճավայիր Աւետիսեան, Բարսեղի կին Թավրէզ, Հումիք Քարօթեան, Խաչօ Գասպարեան (զաւակը վիժած)։ Գիւղացիներու բոլոր ունեցածները կը կողոպտւին, 19 շէնքեր կ'այրւին. թիւ կարօտելոց 181։

Ապրիլ 23. — Խնուսցի երեք թիւրքեր՝ Սասունէն վերադարձին՝ առևանգեցին առվարիջցի Մաքօ անուն մանկամարդ կինը ու Խնուս տարին։

Ապրիլ 25. — Մուշէն կէս ժամ հեռաւորութեամբ ձորակի մը մէջ, գիւղացիներէն Խամէ անուն մանկամարդ կինը, ցորեկ, զօրքերէ կը բռնաբարւի։

Մայիս 4. — Սուլուխցի Յովակի կինը, քոյրը Շուշան և Սատօյի կին Վարչէն՝ կամուրջին մօտ ցորեկ կը բռնաբարւին գիւղին մէջ գտնւող զօրքերէն։

Մայիս 5. — Բազմաթիւ զօրքեր ու ոստիկաններ, առաջնորդութեամբ զապիթ Ահմէտ պէյի, և քիւրդ աշիրէթներ՝ Մուսայ պէյի տղայ Խասիմ պէյ, Հաճի Ֆէրօ

(պալագլը նշանաւոր հարստահարիչ), ինչպէս և Թլքեցի շէյխեր՝ կը յարձակին Մկրագոմի վրայ։ Կըսպաննուին ռէս Մխօ Պօղոսեան, Հլօ Հազրօյեան, Մարտօ Սաֆարեան. իսկ Սալվի անուն աղջիկ մը, Մարգարիտը և իր երկամեայ երեխան խոշտանգումներէ մեռան։ Կը վիրաւորուին Իգնօ Տօրգօյեան, Պետօ Վարդանեան, Քիշմիշ Մարգարեան՝ սուինով։ Զաքար Մխօյեան, Արիկ Աղաճանեան՝ գնդակով։ Խուտրաթ ու Խաթուն անունով կիներ իրենց մանուկները կը վիժեն։ Կը կողոպտուի եկեղեցին, բոլոր սպասները կը սրբապղծուի, կ'այրուի 29 շէնքեր, յափշտակութիւն գիւղական բոլոր ստացուածոց. Թիւ կարօտելոց 448։

Մ ա յ ի ս 5. — Խասգիւղացի երկու հայ մշակներ՝ Մխօ Սրֆէյեան, Մէլօ Մկրօյեան, իրենց արտերուն մէջ կըսպաննուին աւարառու քիւրդերէն։

Ցրօնքի մէջ նստող զօրքերու զապիթը պատրւակով մը լեռ կը ղրկէ Սուլն գիւղացի երկու պատանիներ՝ Տ. Մուշեղի և Շահնօրեան Կրպօյի տղաքներ, անոնց ետևէն երեք քիւրդեր ալ, որոնք երկու տղաքները ալ կըսպաննեն։ Նոյն օր Ցարնիստի մէջ՝ կ'այրուի 5 շէնքեր և Զէրքիքերէն 14 եզներ կը յափշտակուի։

Մ ա յ ի ս 6. — Երիզակցի Ճուլհակ Պետրոս և Աւօ Գէորգեան՝ պալաքլը Շապապ, Փիրան, Իւզէր անուն քիւրդերէն կըսպաննուին։

Մկրագոմի վրայ գացող խումբերը կը յարձակին նաև Ալիգլըոնի վրայ, ուր կըսպաննեն Պշօ անունով հայ մը, եկեղեցին ու գիւղին մեծ մասը կը կողոպտեն, ժողովուրդը պահ մը կը ցրուի, բայց յետոյ կը հաւաքուի։

Նոյն օրը ոստիկաններ, զօրքեր ու քիւրդեր կը յարձակին նաև Պրմերտ գիւղի վրայ կէս օրէ յառաջ, 2,800-է աւելի բազմութեամբ։ Կըսպանուին Պետրոս Հլէյեան, Սնճօ Զաքարեան, Սկնօ անուն երեքամեայ տղայ մը ոտքերու տակ կը ճմլուի, Խազալ անուն կինը դաշոյնահար խոշտանգումէ կը մեռնի, ինչպէս նաև Սահակ Պետրոսեան 8ամեայ տղան. կը բռնաբարուի Դեզօ Մկրօյեան 60ամեայ կին մը, Զունօ Կիկօյեան իր զաւակը կը վիժէ, ինչպէս և Միքէի Սանամը։ Բազմադարեան եկեղեցին կը կողոպտուի, կը սրբապղծուի, գիւղացիներու բոլոր ինչքերը կը թալանուին, քանի մը տուներ կ'աւերուին. Թիւ կարօտելոց 435։

Մ ա յ ի ս 12.—Ճիպրանլը ձիաւոր զինուորներ ու քիւրդ հազարապետ Շալօ, որդին Սիւլէյման և ուրիշ բազմաթիւ քիւրդեր՝ գիւղը աւրելու և զայն գրաւելու նպատակով կը յարձակին Տէրփկի (Աշտիշատ) վրայ. կըսպաննուին Կիրակոս Ցարէյեան, Նասօ Սրգէյեան հերուները, Պետրոս Գէորգեան, Մարտէ Սրգէյեան. իսկ Կունճոյի երկու տղաք՝ Կարապետ և Ցարխէնը՝ մօր աչքին առջև կըսպաննեն ու կը յօշոտեն. առաջինին մարմինն ալ կը տանեն ի Սալըրիկ նախատելու. կը վիրաւորեն Նախրորդ Աբրէն, պատկառելի Հայրապետին Նուիրական գաւազանը կ'անարգեն, կը քայքայեն, եկեղեցին կը կողոպտեն, մէկ մասը կ'այրեն. ժողովրդի բոլոր ունեցածը կը կողոպտուի և կը ցրուի ասդին անդին. Թիւ կարօտելոց 241։

Մ ա յ ի ս 15. — Պնտխներ գիւղացի Պաղդասար Օհանեանը կըսպաննուի պալագլը Ֆելեթ և Չաթօ անուն քիւրդերէն։ Այս գիւղը հերու ամբողջովին կողոպտուած էր պալագցի Սէլիմէն։

Մ ա յ ի ս 16. — Սէյտանցի Ազիզ և Թափօ անուն քիւրդերը խումբով կը յարձակին Ալպուհարի հայոց վրայ, կըսպաննեն Էլօ Խաչօյեանը. Գէորգի կին Նազօն աղջիկ մը կը վիժէ. եկեղեցին ու մաս մը տներ կը կողոպտեն. կարօտեալք՝ 165։

Մ ա յ ի ս 17.—Խումբ մը զօրքեր՝ գիշեր Առինջվանք ու Ծափնայ գիւղերը կերթան և տեղացիներէն Աստուածատուր Շահինեանի, Արթին Բարօյեանի բնակութեանց տուները կ'ուզեն խորտակել. վերջինին տունը կը մտնեն ու կողոպուտներ կ'ընեն։

Մ ա յ ի ս 18. — Ոստիկանապետ Իզզէթ պէյ Ղարց կու գայ, կը պաշարէ զայն հարիւրաւոր զինուորներով և ոստիկաններով. Փէդայի և զէնք կը փնտռէ, այս պատճառով գիւղացիները կը չարչարէ. տուները խուզարկուած ատեն՝ գոյքերը կը կողոպտուին։

Մ ա յ ի ս 20. — Ոստիկանապետը և հետևորդք նոյն նպատակով Ցրօնք կուգան։ Կը ձերբակալեն Մուրատ ու Միսակ անուն երիտասարդները և ուրիշներ։ Կը բռնադատեն որ զէնքերը յանձնեն։ Չարաչար կը տանջուին Մուրատն ու Միսակը. մերկ կը խարազանուին, գլխիվայր կը կախուին, ամօրձիքները գալարել կուտան. 20-30 կտոր զէնքեր ալ հայերէն կը խլեն։

Մ ա յ ի ս 21.—Պալագլը Իւսուֆ չաւուշ, որ բռնի կը տիրապետէ Շմլակ գիւղի հայոց վրայ, այս անգամ ալ իր պարագաներէն Կեամօյի Ուսէ, Նասիր, Սէլիմ անուն քիւրդերը հոն կը բերէ, հայոց տները կը գրաւէ և ժողովուրդը սարսափահար կը փախչի։

Մ ա յ ի ս 22. - Ճպրանլը գայմագամ Իպրահիմ պէյ իր վեց ծառաները կը ղրկէ Բաղու, որուն հողերը գրաւելու ետևէ է (Ս. Կարապետի վանքին մէջ) ու սպաննել կուտայ ռէս Յովէն, եղբայրը Մկրօն, որդին Զազօն և տունը կը կողոպտէ։

Մ ա յ ի ս 24.—Ոստիկանապետ Իզզէթ պէյը՝ Ալիճան, Շէյխ Իւսուֆ, Ախճան ևն գիւղերը խուզարկելէ վերջ, զօրքերով, ոստիկաններով և քրդերով յանկարծ կ'ընկնին Կուրավու գիւղին վրայ և արտի մը մէջ կըսպաննեն Բարսեղ Ամիրխանեան, Գասպար Իկիթեան, Թովմաս Մխիթարեան, Նազար Արթինեան, Յակոբ Յովհաննէսեան, Արշակ Արթինեան, Մխիթար Սարգիսեան։ Կը վիրաւորուին Կիրակոս Սուարեան, Գէորգ Ստեփանեան. իսկ Տիգրան Յարութիւնեան և Միսակ Յովհաննէսեան տղաք խեղդամահ կ'ըլլան Արածանիին մէջ. կը բռնաբարուին Տօնօյի կին Հավսէ, Յակօյի և Նազարի նորահարս կիները, Զունր Էլօյեան 15ամեայ աղջիկը և աղջիկ մ'ալ Խանօ Մարգարեան։ Շատ մը տուներ կը կողոպտուին. գիւղին $^2/_3$ մասը օրապահիկի կարօտ է։

Մ ա յ ի ս 25. — Ոստիկանապետը Գոմեր գիւղը կը պաշարէ, ուր կային Սասունի հայերէն շատերը. բարեբախտաբար գիշերը վրայ կը հասնի, հոն գտնուող սասունցիք և գիւղին ժողովուրդը կը փախչին, այն ատեն կըսպաննուին Ըրքէ Մելքոնեան և Մանէ Վրդօյեան՝ Սասունի Ալիանք գիւղէն։ Շէյխիւսուֆցի Պշտօ Խանդիլեանը ոստիկաններէն կըսպաննուի ցորեկ։ Ուրուղցի Ղուկօյի եղբայր Պետօն չարաչար կը վիրաւորուի պատըգանլը ըսուած քիւրդերէ։

Մ ա յ ի ս 26.—Սասունցի կարօտեալ 4-500 անձերը կուսակալ պէյի հրամանով Մուշէն հեռացնելու համար՝ Մշոյ ոստիկանութիւնը սոսկալի ճնշումներ ի գործ կը դնէ անպաշտպան կանանց և երեխայոց վրայ. տապարով անոնց բնակութեան դռները կը ջարդուին, աղջիկներ, կիներ կը մարին, կը խեղագարին, երեխաներ ոտքերի կոխան կը մեռնին և քաղաքէն դուրս տարուածներէն՝

Դաւոյի աղջիկ Եւան, Կրպէյի կին Նատօ զօրքերէ կը բռնուին և զօրանոցի մէջ կը բռնաբարուին։ Արօքէ Սիմօնեան անուն կին մ՝ալ Գասունի գիւղ տարուելէ վերջ՝ կը խոշտանգուի չարաչար ու կը հիւանդանայ։

Մայիս 27.—Ոստիկանաց զապիթ էֆրքէզ Ահմէտը՝ խումբ մը ոստիկաններով՝ Ալիճան կերթայ Ֆէդայի և զէնք փնտռելու։ Տեղացի հարստահարող թիւրք Քիարիմի հետ միացած՝ կը ձերբակալէ և տանջանաց կ՝ենթարկէ նախ Սրգօն, յետոյ անոր տղան Տիգրանը և ուրիշ երկու երիտասարդներ՝ Սեդրակ Այվազեան և Պաղտասար Եղիկեանը. կը մերկացնեն, կը խարազանեն, սիներու կապելով կը ծեծեն, հորերէ կը կախեն գլխիվայր, ամորձիքները կը գալարեն մինչև որ մարին, տաքցած երկաթով կը խարեն, նստատեղերէ սրածայր փայտեր կ՝անցուցնեն։

Մայիս 29.—Մշեցի ապուզէթի Ռաշիտ, Իպրահիմի Իւսուֆ և Լն թիւրքերը կը սպաննեն Ոսկեան Մանուկեան պատանի մը, ապա յարձակում ոստիկաններու, զօրքերու և քիւրդերու Առաղ գիւղի վրայ. ժողովուրդը կը ցրուի, տունները կը կողոպտուին. խոշտանգումէն կը մեռնի Աղբուրթ Յարոյեան կինը. նոյն երեկոյ կ՝այրուին 6 տուներ և այդ տուներու մէջ բոցերուն զոհ կ՝ըլլայ Գէորգեան տղայ մը և Լուսիկ անուն երկամեայ աղջիկ մը։

Մայիս 30.—Քոլոսեցի Կենճր անուն քիւրդը և ընկերներ՝ չարաչար կը վերաւորեն շմլակցի Սարգիս Գրիգոյեան և Սխիկ Գրէֆեան։ Սասունցի Թումասի կին Հռոմ, Մշոյ մօտիկ, զօրքերէն կը բռնաբարի. խաչգիւղցի Տ. Մանուէլ քահանայ Բրդէեան Շվլակ գիւղէն վերադարձին՝ հաճի Ֆէրոյի եղբօր որդի Խասիմ անուն քիւրդէն կը սպաննուի. նա է, որուն ֆրանսիական հիւպատոսը հիւրընկալած էր մայիս 5-ին։ Ղարց գիւղացի Պողոս Օհնէնեան՝ գիւղին մօտերը կը սպաննուի խնկերվանցի Աճէմիֆար ըսուած ոճրագործէն։ Բերդակցի Սարգսի աղջիկը և Հլոյի կին Կուլէն՝ գիշեր ատեն՝ իրենց տուներուն մէջ խուժած զօրքերէն կը բռնաբարուին։ Պոսթաքենի գիւղապետ Տորտօ և Դանիէլ ու Պողոս անուն գիւղացիք՝ յարձակում կը կրեն, ցորեկ, ճիպրանցի Սատոյի լամուկ Միրզօ և Հօրեղբայր ճնտօ անուն քիւրդերէն ու իրենց մշակներէն. կը սպաննուին. անոնց մարմինները կը յօշոտուի ու կ՝անհետացուի, թող չտալու համար որ թաղուի։ Դըվնեքի գիւղապետ Մխիթար Տ. Անտոնեան իր տան մէջ կը սպաննուի օրկուցցի Կօրոյի Ահմատ և Ահմէ անուն քիւրդերէն և անոնց ընկերներէն։

Մայիս 31.—Կրկին ոստիկանապետ Իզզէթ պէյ, հարիւրաւոր ոստիկաններով և շրջակայ գիւղերու մէջ զետեղուած զօրքերով, իրիկուան ժամը 10-ի ատենները, կը յարձակի Գոմեր գիւղի վրայ ու կը պաշարէ զայն. անմիջապէս հրացանաձգութեան կ՝ենթարկեն. ժողովուրդը սարսափահար կը սկսի փախչիլ անտառախիտ ձորակէ մը. խուճապին ատեն կը սպաննուին գիւղապետ Սարգիս Յովսէփեան, Մարկոս Սարգսեան, Կիրակոս Մկրտչեան, Օհան. Մկրտիչեան և Խզամ Վարդանեան անուն կին մը, զոր փորէն կը մորթեն... Կը վերաւորեն Յովիկ Մկրտչեան, Սարգիս Տալոյեան, Սանամ, Նուպար և Մարիամ անուն կիները ու Սողիկ անուն աղջիկը։ Օհանի կին Էմօն կը վիժէ իր զաւակը։ Արթին Կարապետեան, Արամ Օհանեան և Մարտօ Արթէնեան անուն տղայ մը կը խելագարուին. 2 եկեղեցիք և բոլոր տուներ ու ժողովրդական ստացուածք կը կողոպտեն, ժողովուրդը կը ցրուի. կ՝այրուին 32 շէնքեր ևն. Թիւ կարօտելոց 463։

Յունիս 1.—Ոստիկանապետը նոյն բազմութեամբ կը պաշարէ նաև Ս. Յովհաննու սագարան Տատրագոմը, տուները ու կենդանիք կը կողոպտուին. կը սպաննուին Մօրքէ Թամոյեան, Խաչիկ Սագոյեան, Ստեփան Օսէեան երիտասարդները. ժողովուրդը կը ցրուի. Թիւ կարօտելոց 151։ Նոյն օրը կը կողոպտուին նաև Պլէլ գիւղի հայոց բոլոր գոյքերը. ժողովուրդը կը ցրուի. Թիւ կարօտելոց 125։

Յունիս 2.—Փողրկովի գիւղապետ Ռաշօն կը սպաննուի գիւղին մէջ՝ տեղւոյն պէյերէն։ Խճանցի Ցունան Ղանտիլեան, Սէյաթ Նիրոյեան և Գասպար Ղանտիրեան կը սպաննուին գիւղի արտերուն մէջ՝ սէյտանցի ըսուած քիւրդերէ։

Յունիս 3.—Ուռողցի Գրօ Մէսթեան, Օհան Պլընգոյեան կը սպաննուին, իսկ Ղուկէ Գասպարեան. Խուրշուտ Ճարկոյեան և Պետրոս Գասպարեան կը վերաւորուին իրենց գիւղին մօտերը՝ Մեզրէ Մահմէտի, Վէլի, Ահմէտ, Իւսուֆ և Լն քիւրդերէ։

Յունիս 5.—Գեղաշէնցի Խուրշուտ Տէլոյեան, Տօնիկ Գրոյեան՝ իրենց գեղը երթացած ատեն՝ ճամբան քրդերէն կը սպաննուին։

Յունիս 6.—Առաւօտ ժամը 4-ին, ոստիկանապետը՝ ոստիկաններով, զօրքերով և մշեցի թիւրք ու քրդերով՝ կը յարձակին Դէրկէվանք գիւղին վրայ „ֆէդայի կայ“ ըսելով, մինչդեռ ոչ ոք գտնուեր է հոն, և արտերու ու տներու մէջ զբաղող հայերէն կը սպաննեն՝ Վրդօ Պողոսեան, Մեսրոպ Պողոսեան, Պղտօ Խաչիկեան, Պետրոս Արթինեան, Շահնազար Զատոյեան, Արշակ Զաթոյեան, Մխիկ Գրիգորեան, Գէօ Սրգոյեան, Մարտիրոս Մկրտչեան, Մարտիրոս Երէցեան, Գրիգոր Նշոյեան. կը վերաւորեն՝ Խաչիկ Յովհաննէսեան, կը կողոպտեն շատ մը տուներ։ Նոյն միջոցին կը սպաննուին ալիղուլումցի Մուրատ Արթինեանը և Դէրկէվանքի մէջ գտնուող առաղցի Մխիկ Գուլոյեան, Մուշեղ Փարոյեան. կը բռնաբարուին առաղցի Հռոս Տօնոյեան, Հռոմիկ Մկրտիչեան, Թագուհի Մնոյեան, Տէր Կարապետի կինը, Տիլպար Խաչոյեան, Շուշան Խաչիկեան Առաղի մօտերը։ Թիւ Առաղի կարօտելոց՝ 621, Դէրկէվանքի՝ 314, գիւղին $^{2}/_{3}$ մասը։

Յունիս 7.—Զապթիյէ Ադէ՝ ոտքի ներքև ճմլելով կը սպաննէ եղկարթցի Տիգրան Օսէեան 2ամեայ տղեկը։

Յունիս 8.—Խրզըլաղաճցի Գասպար Սարգիսեան՝ գիւղին մօտ գնդակահար կը սպաննուի հաճի Ֆէրոյի լամուկ Օհանէն։

Յունիս 10.—Տատրագոմցի Կուլէ Օհանեան, Սառէ Խաչոյեան, Աննօ Օսմանեան՝ կը բռնաբարուին Ս. Յովհաննու վանքը կեցող զօրքերէ, ցորեկ և հրապարակաւ։

Յունիս 12.—Առվարինջցի Յակոբ Փողտեան իր արտին մէջ աշխատած ատեն՝ կը սպաննուի հաճի Ֆէրոյի Հասան անուն տղայէն։ Կէլիէկընմանցի Արթին Օհանեան, որ վերաւոր ձերբակալուած բանտը կը մնար, առանց դատավարութիւն մը կրած ըլլալու, կը մեռնի բանտին մէջ։

Յունիս 20.—Բռնաշէնի կծանք գիւղի Վալդանի աղջիկ Խազալը՝ կ՝առևանքի պալագքի Միրխան անուն քիւրդէն, որ 6 ոսկի խալան առնելով՝ կը ծախէ զայն կծանքցի պալաքը Սղեր անուն քիւրդին։ Ալիճանցի Պետրոս Ներսէսեան կը սպաննուի երեկոյեան ժամը 2-ին իր տան դրան առջև՝ Քերիմ աղայի թելադրութեամբ՝ երեք քիւրդերէ։

Այս տարուան զոհերու թիւն է՝ 109 սպաննուած, 29 վիրաւոր, 47 բռնաբարուած, 9 վիժած, 2 առևանգուած,

11 եկեղեցիներ սրբապղծած։ Ընդհանուր կարօտելոց թիւը դաշտին մէջ՝ 5,324։

—

Այս տեղեկագիրը պատկերն է միմիայն Տարօնոյ դաշտի վերջին 2-3 ամսայ տառապանքներուն։ Դուք գիտէք, թէ այս վշտերը տարիներով շղթայաւորուած՝ կ'իջնեն, կը քամեն ու կը մրկեն մեր դժբախտ ժողովուրդը։ Պատերազմը՝ յեղափոխութիւնն է, իսկ նպատակը՝ մեր գոյութեան ջնջումը։

Թողունք անցեալը—նոյն նպատակով 1899-1900-ին, դաշտի բազմաթիւ գիւղերը՝ զօրքերու, ոստիկաններու և քրդերու յարձակմանց ենթակայ եղաւ. և սպաննուեցան անխնայ՝ վարդապետ, քահանայ, գիւղապետ, գիւղացի, կին և երեխայ 235 հոգի,—թողունք բռնութիւններն, առևանգութիւններն ու անհաշիւ կողոպուտները։ 1901ին աւելի կատաղութեամբ հարիւրաւոր ձերբակալութիւններ, աւարառութիւններ, սարսափ և այլն. 115 սպաննութիւններ անմեղ հայերու. ստուարաթիւ ընտանիքներու, օճախներու քայքայումն, ի տարապարտուց շատ դժբախտներու բանտերի մէջ հեղձամղձուկ մեռնիլը, Սասունի և թէ դաշտին մէջ՝ Սպաղանք, Զորեր, Եղկարթ, Խտան, Հիթենք, Գեղաշէն, Շուշնամերկ գիւղերու, նաև Մառնիկ, Բնտըղներ, Տալատն, Մոկունք, Կէլխոյ գիւղերու աւերածութիւնը։ Ու տագնապը կանգ չառաւ. 1902-ին և 1903-ին թալան և սպաննութիւններ, առևանգութիւններ ու բռնաբարութիւններ, ասոնց հետ համընթաց՝ հարկահաւաքութեանց ու կեղեքմանց չարիքները՝ ժողովուրդը օրհասական վիճակի մէջ դրին. կեանքն ալ անտանելի դարձաւ բացարձակապէս. այլևս ժողովուրդը ամենևին տէր չէր և չէ իր կեանքին, իրաւունքին, իր պատուին և ստացուածքին։ Ինչպէս շատ ցայտուն կերպով կ'երևի հարստահարութեանց փշալից այդ փունջէն, և ահա պայթեցաւ այս ահաւոր աղէտն ալ, որուն մէջ կը տապլտկայ ժողովուրդը, որ արդարև այսօր լաւագոյն կը համարի մահը, քան յարատևութիւնն արդի զարհուրելի տուայտանքին։

Առ այս կը մատուցանեմք Ձեր ուշադրութեան՝ արիւնոտ ցուցակը Սասնոյ և Մշոյ դաշտի ջարդերուն և խըժդըժական կոտորածներուն, որոնց նկարագիրը կը սոսկանք պատրաստելու։ Արկածաւոր ժողովրդեան ներկայացուցած ներկայ ցուցակներով՝ Սասնոյ հինգ շրջանակի (Կէլիէ-կուզան, Շատախ, Խիան, Տալորիկ և Փսանք գաւառակի մի մասի, ընդամէնը 42 գիւղերու (ագարակներ մեծ գիւղերուն միացած) կոտորածն է ըստ այսմ՝ 2809 այր, 2,193 կին, 2771 երեխայ — ընդամէնը 7773։ Մնացեալ կարօտեալները 8854։ Վնասած ու կողոպտուած են 49 եկեղեցիներ, այրած 2,262 բնակութեան շէնքեր, որոնք կը պատկանէին 1,369 բազմանդամ ընտանիքներու։ Ցուցակը կը ներկայացնէ նաև նիւթական անդարմանելի վնասներ։ Ներփակ է նաև դաշտի աղէտին ցուցակն ալ։ Առայժմ՝ 14,178 արկածաւորներ ունինք, անօթի, մերկ ու թշուառ, որոնք կարօտ են գերագոյն մխիթարութեան ու մեծագոյն նպաստներու։ Եթէ բարերար տնօրէնութիւններ չհասնին, աւելի սոսկալի պիտի ըլլայ թշուառութեան վտանգը՝ կոտորածի աղէտէն։ Այս անհուն թշուառութեան առջև՝ կը դիմենք և կ'աղաչենք, որ հաճիք անյապաղ նպաստներ հասցնել՝ թշուառութեան ճանկերէն ազատելու ձեր խեղճ հօտը։

Եթէ հնար է պիտի խնդրեմ, որ բարեհաճիք Եւրոպայի մարդասիրական հաստատութեանց և Կարմիր Խաչի մարմիններու ուշադրութիւնը հրաւիրել՝ այս բիւրաւոր տառապողներու վրայ։

Առաջնորդական փոխանորդ Տարօնոյ
(Ստորագրութիւն)

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՂԱԶԱՐԵԱՆ-ՄԱՄԲՐԷԵԱՆ

(ՀՐԱՅՐ–ԴԺՈԽՔ)

Գրող-ռազմիկ...

Մէկը այն քաջերից, որոնք առաջնորդեցին ապստամբ Սասունը վերջին արիւնահեղ ճակատամարտներում և զէնքը ձեռին նահատակուեցին։ Մէկը այն հալածեալ գործիչներից, որոնք հաւասար հմտութեամբ գիտեն վարժեցնել և՛ սուր և՛ գրիչ։ Մէկը այն սակաւաթիւ ընտրեալներից, որոնք թէև սնուած բարբարոսութեան ու անծայր տգիտութեան գրկում, հրապարակ են գալիս փայլուն մտաւոր ընդունակութիւններով՝ իբրև հռետոր-պրոպագանդիստ, իբրև գրող-հրապարակախօս...

Կարդացէք Դժոխքի երկար, սրտառուչ տեղեկագիրները հայաստանցու ամենօրեայ հարստահարութիւնների մասին, կարդացէք մանաւանդ Նրա կոչերը տագնապի միջոցին, ուղղուած հայութեան, Նրա բողոքները՝ ուղղուած մարդկութեան, քաղաքակիրթ աշխարհին... Ցաւոտ ժողովրդի հարազատ ղաւակը միշտ լալիս էր, ցնցող, աղիողորմ լացով և անկարելի էր լսել Նրան, առանց յուզմունքի... Մի հարուստ ու բազմակողմանի պարունակութիւն, որի ամէն մի տողից արիւն է կաթում, մի ճոխ ու նկարուն լեզու, որ գիտէ յուզել ամենապաղ հոգիներն անգամ, մի ճկուն ու կենդանի ոճ, որ խորապէս անհատական դրոշմ է կրում և իր պարզութեամբ ու գեղեցկութեամբ կարող է օրինակ լինել թիւրքահայ գրողներից շատ շատերին։ Նրա ոճի ու լեզուի, խօսքի, հայեացքի, ամբողջ կերպարանքի մէջ մի հմայիչ բան կար, որը չնայելով փոքր ինչ շեշտուած անհատականութեան, գրաւում էր սրտերը, գերում էր ամբոխին և 10 տարի շարունակ առաջնորդում էր մեր հերոսին յեղափոխական փշոտ ճանապարհով...

Այո՛, 10 տարի... Յեղափոխականի համար մի յաւիտենականութիւն... Սասունի առաջին ցնցումներն էին— 1894 թուի—որ ծնունդ տուին Դժոխքին, և այնուհետև՝ որքա՜ն փորձութիւններ, որքա՜ն արիւններ անցան նրա գլխով...

Նա ծնուել է 1866 թուին, Սասնոյ Խուլը գաւառակի Ահարոնք գիւղում։ Դեռ մանուկ էր, երբ իր ծնողները քրդական բռնութիւններից ստիպուած, մի քրէական խնդրի առթիւ գաղթեցին Մշոյ դաշտ և հաստատուեցին Ղըզըլաղաճ գիւղի մէջ։ Հայրը քահանայ էր և սիրում էր ուսումը։ Որդուն նա տուեց Ս. Կարապետի վանքի դպրանոցը, որ այն ժամանակ կանոնաւոր վիճակում էր գտնուում։ 1890 թուին Արմենակը աւարտեց, ստանալով միջակ կրթութիւն։

Հէնց այդ ժամանակներից էլ սկսւում է նրա յեղափոխական կեանքը։ Մուշում նա գտնում է գաղափարակից ընկերներ, կազմում է նրանցից առաջին յեղափոխական խումբը։ Դրանից առաջ նա ընկերների հետ գործադրում էր յաճախ թիւրքերի և քրդերի դէմ „ակն ընդ ակն"ի օրէնքը։ Գիշերները գաղտնի դուրս էր գալիս տնից, միանում էր ընկերներին և գնում էին վրէժխնդիր լինելու հայի ինչքը յափշտակողներից։

Գիւլիզարի առևանգումից ի վեր վրէժխնդրութեան փորձերը սովորական էին դարձել, իսկ 1890-ին արդէն յեղափոխականները հրապարակ եկան որոշ ծրագրով։

1891-ին Մուշ է գալիս Միհրան Տամատեան, իբրև հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչ և տեսնում է, որ այնտեղ արդէն կայ անանուն մի կազմակերպութիւն, գործնական հողի վրայ։ Տամատեան խսկոյն կապ է հաստատում նրա հետ և Արմենակ դառնում է իր գործակիցը։ Շատ անգամ մէկտեղ խորհել ու վճռել են հարցեր. մէկտեղ շրջել են Սասունի գիւղերը։ Տամատեանի ձերբակալումից յետոյ, երբ Մուրադ յաջորդեց նրան, Արմենակ աւելի վճռական դարձաւ. նա միանգամից գրկեց գործունէութեան բոլոր ձևերը—թէ զինուոր էր, թէ պրոպագանդիստ և թէ թղթակից։

1894-ի Սասունի դէպքերից յետոյ, Դժոխքը, որ անձամբ մասնակցել էր մի քանի ընդհարումների, ժամանակաւորապէս թողեց երկիրը։ Ամիսների ընթացքում շրջում էր Կովկասում, Սև ծովի ափերում, Ռումանիայի, Բուլգարիայի հայ գաղութներում, իր ազդու քարոզներով ոգևորութիւն ու հետաքրքրութիւն էր շարժում թիւրքահայ պանդուխտների մէջ, յորդորում էր նրանց վերադառնալ Մայր-երկիր...

Ամէն տեղ կարելի էր տեսնել նրան՝ շրջապատուած մտախոհ երկրացիներով, որոնք գլուխները կախած՝ պատկառանքով լսում էին նրա յորդորները, յաճախ յանդիմանութիւնները...

Դժոխքի համար շատ էլ քաջալերական չէր այդ պտոյտը։ Երկրից մեկնելիս՝ նա վստահ էր, որ խրախուսանք և կատարեալ աջակցութիւն պիտի գտնէր այն կազմակերպութեան կողմից, որի զինուոր էր գրուել նա, բայց յուսախաբուեց։ Ժամանակին պարզուած են այդ յուսախաբութեան պատճառները. ապարդիւն ենք համարում վերստին յիշատակել։ Այնուամենայնիւ „հնչակեան" անունը Դժոխքը առժամապէս պահեց իր վրայ և քառասուն հոգուց բաղկացած իր խմբով դիմեց Հայ Յեղ. Դաշնակցութեան աջակցութեան։ „Դաշնակցութիւնը" դրեց նրա տրամադրութեան տակ իր ամենալնտիր զէնքերը։ 1895-ի օգոստոսին, երբ ջարդի ուրուականը սպառնալից նկարուել էր արդէն հայոց հորիզոնի վրայ՝ Դժոխքի խմբի մի մասը Աշոտ-Թաթուլի (Արամ Արամեան) խմբի հետ միաժամանակ մտաւ երկիր։ Իսկ ինքը 15 հոգով անցաւ սահմանը ճիշդ այն ժամանակ, երբ կոտորածի ալիքները հասել էին Բասեն։ Մեծ հմտութեամբ ու քաջութեամբ կռուելով, նա փառաւոր յաղթութիւն տարաւ Դալիբաբայի շրջակայքում և ահագին զարկ տուեց ինքնապաշտպանութեան գործին։ Մնալով այնուհետև երկրում՝ Դաշնակցութեան գործիչների ու խմբերի հետ անսովոր եռանդով գործում էր Բասենի գիւղերում՝ քաջալերելով ու զինելով ժողովրդին։

Անարգ մատնութիւնը եկաւ ժամանակաւորապէս անջատելու նրան սիրած ժողովրդից ու նիւթական գործից։ Դժոխք ձերբակալուեց Աշոտ-Թաթուլի հետ. միաժամանակ գրաւուեցին Դաշնակցութեան 70 զէնքերը։ Ազատութեան երկու մատաղ զինուորները ենթարկուեցին մի ճշմարիտ ինկվիզիցիայի։ Երկուսն էլ սակայն ամիսների սոսկալի տանջանքների տակ, պահպանեցին յեղափոխականի անաբատութիւնը, հրաժարուեցին ուևէ խոստովանութիւնից։ Իրենց անունները միայն ստիպուած եղան յայտնել, քանի որ տեսան, որ չեն կարող ճողոպրել իրենց նախկին ընկեր դաւաճան Ազբայէլի [1]) յայտնութիւններից, որը իրենց ներկայութեան տեղեկութիւններ էր տալիս կառավարութեանը։ Դատարանը մահուան վճիռ տուեց, բայց ընդհանուր ներման ժամանակ Դժոխքը բանտից ազատուեց և կառավարութեան ձեռքով ուղարկուեց Մուշի դաշտ, իր բնակավայրը, ուր, սակայն, շարունակեց մնալ խիստ հսկողութեան տակ...

Գիւղի գրագիրն է դառնում, բայց շարունակում է թղթակցութիւններ ղրկել „Դրօշակ"ին և իբրև խաղաղ գործիչ՝ իր խորհուրդներով ու գիշերային պրոպագանդով օգնում է Սեբոբ-Աղբիւրի գործին։

1898-ին Սաքօն, որ Սասուն գնալու համար երկիր էր մտել, ձերբակալուում է Ղըզըլաղաճի մէջ և դատապարտուում է լինում նաև Դժոխքի ձերբակալման. սակայն երկար չէ մնում բանտում։

Այսպէս խաղաղ շարունակում էր նա կազմակերպելու գործը մինչև 1901 թուականը, երբ կառավարութիւնը՝ ինչ ինչ փաստերի հիման վրայ, ուզեց ձերբակալել մեր ընկերոջ. բայց նա խոյս տուեց, մի քանի զինուորներով անցաւ Ախլաթ, այնտեղից Վան, ուր Վահանի և ...ի հետ մնաց մի ամբողջ ձմեռ. միասին կազմեցին ծրագիրներ ժողովուրդը զինելու, պատրաստելու։ 1902-ի գարնան մեկնեց Ախլաթ, ուր մնաց մինչև աշուն և վերակազմեց տեղական թուլացած կազմակերպութիւնը։ Աշնան Երկ...ի հետ անցաւ Սասուն և մնաց այնտեղ մինչև 1903-ի ամառը։ Երբ իմացաւ, թէ Բասենի խումբը պիտի սահմանը անցնի, և նկատեց, որ կառավարութիւնը Մուշի դաշտը խիստ հսկողութեան է ենթարկել և Սասունը պաշարել, Դժոխք առաջարկեց գնալ խմբին ընդառաջ և ապահովել նրա գալուստը. բայց ինչպէս յայտնի է, այդ սպառազէն խումբը չ՝ակնկալուած տեղում կռիւ առնուեց և Դժոխքը սիրտը կոտրուած ետ դարձաւ։ Մի քանի տղաներով դաշտ իջաւ գալոց կռիւների պատրաստութիւնները տեսնելու համար. իր զինուորները իր բացակայութեան ժամանակ դէպքի բռնուեցին Յունանի մէջ... Վերստին բարձրացաւ։

1) Վերջերս սպանուած „Դաշնակցութեան տէոորիստներից։

Երբէք մի վայրկեան դադար չունէր։ Պատասխանատու մարմնի անդամ էր նա ընտրուած և միշտ ժողովուրդը համոզելու, քաջալերելու ետևից էր ընկած։ Ժողովրդի մէջ նա հեղինակութիւն էր, նրա խօսքը պատգամ։ Ժողովուրդը սիրում է բոլոր յեղափոխականներին, բայց դէպի Դժոխքը ունեցած սէրը արտակարգ էր։ Առաքելոց վանքի յայտնի կուռի վրայ ժողովրդական մի երգ է յօրինուած, որ վերջանում է հետևեալ բառերով. „Ափսո՜ս, որ հոն չէր Ղազարեան Արմէն"։ Այնքան կը սիրէր նրան հայաստանցին, որ կը ցաւէր, որ Դժոխք մասնակից չէր եղած վանքի յաղթանակին։

Ի՞նչումն էր այդ նիհար, թուլակազմ երիտասարդի ուժը... Նա չունէր ոչ Սերոբի առիւծային կերպարանքը, ոչ էլ Անդրանիկի յանդուգն թափը, բայց նա շա՜տ էր սիրում դաշտեցուն, լեռնցուն, սիրում էր զգայուն հօր պէս, միշտ նրանց հետ էր, միշտ բաժանում էր նրանց ցաւերը, սիրտ էր տալիս նրանց, ներշնչում էր անպայման հաւատ դէպի յեղափոխութիւնը, որով նա ինքը խորապէս տոգորուած էր, — այդտեղ է նրա մեծ ժողովրդականութեան գաղտնիքը։ Նրա միշտ տխուր, թախծոտ ու մտախոհ կերպարանքը ամենալաւ արտայայտիչն էր այն ջերմ, անաղարտ սէրի, որի համար նա տանջուեց ամբողջ 10 տարի, բանտում ու աքսորում, թափառական և հալածական...

Նա իր պաշտած ժողովրդի հետ էր և սարսափելի ճգնաժամին, երբ նուիրական լեռների վրայ կրկին անգամ կուտակուեցին ահագնադղորդ, շանթառատ ամպերը... Դժոխք մարմնացած եռանդ դարձաւ. իր վտիտ մարմնով նա ցցուեց Սասնոյ պատուարների վրայ և սրտառուչ, աղիողորմ ձայնով հաւա՜ր կանչեց։ Նա միաժամանակ ազդարարեց Սասունի մօտալուտ կարմիր տասնամեակը, պաղատագին յորդոր կարդաց Դումաններին ու Վարդաններին՝ օգնութեան շտապել։

Նրա գուշակութիւնը կատարուեց... Սասունը արիւնով տօնեց իր տասնամեակը, որ նաև Դժոխքի գործունէութեան առաջին ու վերջին տասնամեակը եղաւ...

Ժողովուրդը իր սիրելի առաջնորդի հետ գրոհ տուեց թշնամու մագլցող բանակի վրայ և Յեղափոխութեան անխոնջ պրօպագանդիստը ընկաւ վաղաժամ, տակաւին կռուի սկզբնաւորութեան մէջ... Թանկագին մարմինը մեծ շուքով թաղուեց Շէնըքի մէջ, այն խրոխտ բարձունքների վրայ, ուր Դժոխքը այնքա՜ն հառաչանքներ էր արձակել և այնքան երազներ էր փայփայել...

Խոնարհուե՛նք սիրելի գերեզմանի առաջ և երբէք չմոռանանք Դժոխքին։

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ԿՈՆԳՐԷՍԸ

II.

Նոր հոսանքը — անուանեցէք այն Բերնշտայնիանիզմ, րէվիզիոնիզմ կամ օպպորտիւնիզմ — չէ հակասում ուրեմն սօցիալիզմի էութեան, այլ միայն թուլացնում է նրա յեղափոխական բնաւորութիւնը։ Նա հաւատում է սօցիալիզմի յաղթանակին, բայց այդ յաղթանակը պիտի կատարուի հեռաւոր, անյայտ ապագայի մէջ և ոչ թէ ցնցումներով ու կատաստրօֆներով, այլ յամր, աստիճանական զարգացումով։ Նա շատ չի զբաղւում հեռանկարներով, նրա գլխաւոր մտահոգութիւնը շարժման վերջնական նպատակը չէ, որ մի օր ինքնին, ճակատագրականօրէն պիտի իրագործուի, թէկուզ շատ հեռու, մշուշապատ ապագայում, — նրա գլխաւոր մտահոգութիւնը՝ ինքը շարժումն է, իրերի հոսանքը, ներկան։ Այդ տրամադրութիւնը այն աստիճան չեշտւում է րէվիզիօնիզմի մի քանի կողմնակիցների մէջ, որ նրանք չափազանցրած արտայայտութեամբ պնդում են, թէ շարժումը ամէն բան է, վերջնական նպատակը՝ ոչինչ (*Die Bewegung ist Alles, das Endziel Nichts*)։ Եւ ինչպէս որ ամէն մի ծայրայեղութիւն անհրաժեշտօրէն դուրս է կոչում հակառակ ծայրայեղութիւնը — գտնւում են մարդիկ միւս էնտրանզիժան կամ արմատական բանակում, որոնք յայտարարում են թէ՝ վերջնական նպատակը ամէն բան է, իսկ շարժումը — ոչինչ (*Das Endziel ist Alles, die Bewegung Nichts*)։

Պէտք է ձգտել բոլոր հնարաւոր միջոցներով բարձրացնել — ներկայ ռէժիմի շրջանակներում — աշխատաւոր դասակարգի նիւթական, մտաւոր ու հոգեկան վիճակը — ասում են Բերնշտայնական ուղղութեան ներկայացուցիչները։ Ամէն բան լաւ է, բոլոր ռէֆօրմները՝ թէկուզ և աննշան՝ ընդունելի են, եթէ նպաստում են պրօլետարիատի բարեկեցութեան։ Դրա համար և նրանք չեն խորշում սիստէմատիկ, յարատև իրաւախոհութիւններից բուրժուազական ռադիկալ գոյնի կուսակցութիւնների հետ, որոնց գործակցութիւնը յաճախ անհրաժեշտ է կառավարութիւնից այդպիսի ռէֆօրմներ նուաճելու համար։

Նոր ուղղութիւնը, նախ քան Բերնշտայնի ձեռքով թէօրիայի վերածուիլը, գոյութիւն ունէր արդէն գործնական կեանքում։ Նրա ամենահաւատարիմ արտայայտիչն էր գերմանացի հեղինակաւոր սօցիալիստ և նոյնպէս Ռայխստագի անդամ, Ֆօն Ֆօլլմար, որը իր կազմակերպական տաղանդով և երկարամեայ անխոնջ գործունէութեամբ, մանաւանդ գիւղացիների մէջ, ահագին ժողովրդականութիւն է վաստակել ամբողջ հարաւային Գերմանիայում։ Երկար տարիներից ի վեր ուղղադաւան Մարքսիզմի երկրպագուները — Կաուցկի, Բէբէլ ևլն — աշխատում են խրատել Ֆօլլմարին, մտրակում են նրա „օպպօրտիւնիստ", „անսկզբունք" ընթացքը (*Prinzipienlosigkeit*), պահանջում են, յանուն սօցիալիզմի, ձայն չտալ մանր ռէֆօրմների, „պալիատիւների" համար, յորդորում են նրան լինել աւելի էնտրանզիժան և նուազ զիջող՝ բուրժուազական, թէկուզ և դէմօկրատ, կուսակցութիւնների դիմաց, — սակայն, ապարդիւն։ Պայքարը շարունակւում է և Ֆօլլմար ունի տակաւին ամբողջ Գերմանիայում իր բազմաթիւ համախոհները՝ թէ ինտելիգենտ և թէ բանուորական խաւերի մէջ։

*

Բայց „օպպօրտիւնիզմը" առանձնապէս ծաղկեց, հասաւ, կարելի է ասել, իր գագաթնակէտին գործնական սօցիալիզմի կլասիկ վայրում, Ֆրանսիայի մէջ, ուր ամէն մի հասարակական խոշոր երևոյթ, ամէն մի պայքար անխուսափելի կերպով ստանում է աշխարհասասան բնաւորութիւն, բևեռում է իր վրայ ամբողջ քաղաքակիրթ երկրագնդի ուշքն ու միտքը...

1899 թւին Ֆրանսիայում յանկարծ երևան եկաւ սօցիալիստ-մինիստր՝ յանձին Միլրանի...

Փոթորկոտ օրեր էին, Ֆրանսիան ճգնաժամ էր անցնում։

Դրեյֆուսի հռչակաւոր դատը բաժանել էր երկիրը երկու անհաշտ, թշնամի բանակների, և հակադրեյֆուսեան տարրերը — միապետականներ, կղերականներ, անտիսեմիտներ—միացած մի ահաւոր դաշնակցութեան մէջ՝ դաւ էին նիւթում հանրապետութեան դէմ: Ֆրանսիան վերածուել էր մի սոսկալի մարտադաշտի: Պարիզի փողոցներում շրջելը վտանգաւոր էր դարձել արդարութեան պաշտպանների համար, Զօլաների դէմ անասնացած ամբոխը մոլեգնութեամբ քարեր էր նետում և „ի խաչ հան“ գոռում. այն ինչ ֆանատիկոս Դերուլեդները հրապարակով փորձեր էին անում, տապալելու հանրապետական ռէժիմը...

Այդպիսի մի խառնակ ժամանակում էր, որ Վալդեկ-Ռուսսո իր ձեռքն առաւ կառավարութեան ղեկը: Պէտք էր ազատել հանրապետութիւնը անցեալի խաւար ուժերից և Գամբետայի հռչակաւոր գործակիցը կոչ արաւ բոլոր հանրապետական կուսակցութիւններին: Նա հրաւիրեց իր մինիստրութեան մէջ նոյնիսկ սոցիալիստ Միլլանին, քաջ գիտակցելով, որ հանրապետական մեծ պայքարը չէր կարող յաղթանակել, առանց բանւորական լեգիոնների հզօր աջակցութեան: Միլլան ընդունեց առաջարկը և այդ օրից երկպառակութիւնը մտաւ ֆրանսիական սոցիալիստների մէջ, որոնք թէև մինչ այն ևս կատարելապէս միաբան չէին, բայց դեռ գիտէին համաձայնութեան գալ ներքին քաղաքականութեան ծանրակշիռ հարցերում...

Միլլանի մինիստր դառնալու հանգամանքը ունէր, անտարակոյս, խոր նշանակութիւն մասսաների հոգեբանութեան տեսակէտից: Ամբողջ սոցիալիստական աշխարհը տեսնում էր դրա մէջ մի փայլուն ապացոյց սոցիալիզմի յարաճուն հմայքի և գալոց յաղթանակի: Անհերքելի է և այն՝ որ սոցիալիստ մինիստրը, որը չէր քաշւում հրապարակով ծանուցանելու իր սոցիալիստական դաւանանքը, իրական ծառայութիւններ մատուցեց բանւոր ընդհանրութեանը մի քանի ռէֆորմներով, որ նա աջողեց անցկացնել պարլամենտում: Անուրանալի է վերջապէս, որ Միլլանի ներկայութիւնը մինիստրութեան մէջ նպաստեց հանրապետական քաղաքականութեան աջողութիւններին, որի շնորհիւ հրապարակը մաքրուեց „նացիոնալիստական“, միլիտարիստական վայրենի խուժանից, „Սատանայի կղզու“ հռչակաւոր նահատակը՝ Դրեյֆուս՝ վերադարձուեց իր հայրենիքը և նրա դատը ստացաւ առժամանակեայ բաւարար լուծում:

Սակայն Միլլանի մինիստրութիւնը, այդ բոլորին նպաստելով հանդերձ՝ ունեցաւ և իր բացասական կողմերը: Նա շարունակեց իր մինիստրական պաշտօնը նաև ճգնաժամը անցնելուց յետոյ, երբ հակահանրապետական դաւադրութիւնների վտանգը անցել էր արդէն, երկիրը խաղաղուել էր, կեանքը ընդունել էր իր նորմալ ընթացքը: Նա շարունակեց իր մինիստրական պաշտօնը, նոյնիսկ մի քանի տխուր դէպքերից յետոյ, երբ կառավարութեան հաւանութեամբ՝ զօրքը հրացանի էր բռնել գործադուլի բանւորներին, շատերին վիրաւորել էր և երկուսին էլ գետին էր փռել: Նա այդպիսով, թէև անուղղակի, մեղսակից եղաւ պրոլետարական արիւնհեղութեան, իբրև անդամ նրա սատարող բուրժուական կառավարութեան. իսկ միւս կողմից՝ նա իր պաշտօնի թեւադրութեամբ՝ ընդառաջ էր գալիս և ողջունում էր Ռուսաստանի մեծ բռնակալին — Նիկոլայ ցարին: Եւ իր ընթացքով նա միշտ աւելի և աւելի աճեցնում էր դժգոհութիւնը բանւորների մէջ, բորբոքում էր երկպառակութիւնները սոցիալիստական երկու անջատուած բանակների միջև:

Մէկը այդ բանակներից, որին գլուխ էր կանգնած Ժան Ժորէս, շարունակում էր պաշտպանել սոցիալիստ մինիստրին: Զ'ուրանալով հանդերձ, որ սոցիալիստի ներկայութիւնը բուրժուազական կառավարութեան մէջ ունի իր յայտնի և անխուսափելի անպատեհութիւնները, Ժորէսի բանակը գտնում էր այնուամենայնիւ, որ Միլլանի մինիստր լինելը մեծապէս արդիւնաւոր էր բանւոր ընդհանրութեան շահերի տեսակէտից: (Պէտք է, սակայն, յիշեցնել, որ ինքը Ժորէսը, ինչպէս և իր մի քանի զգաստ ընկերները՝ Պրէսանսէ ևն, կամաց-կամաց փոխեցին իրենց դիրքը դէպի Միլլան, ժխտեցին նրա ծայրայեղ օպպորտունիզմը և ի վերջոյ լքեցին նրան: Զափից դուրս ազնիւ, սրտացաւ ու յեղափոխական խառնուածքի տէր մարդիկ էին դրանք, որպէս զի կարողանային տևողաբար իրաւախոհել Թուլամորթ Միլլանի հետ):

Սոցիալիստական հակառակ բանակը, որի առաջնորդն է Ժիւլ Գէդ, պնդում էր, որ Միլլանի արածը բանւոր դասակարգի համար զէրօ է և որ նրա պաշտօնէութիւնը բուրժուական մինիստրութեան մէջ՝ անբարոյականացուցիչ ազդեցութիւն միայն ունի պրոլետարիատի ու սոցիալիզմի վրայ:

Սակայն այդքանով չէր բաւականանում Գէդի բանակը: Էնտրանզիժան, „անաղարտ“ մարքսիզմի անունով՝ նա պահանջում էր, որ սոցիալիստները ոչ միայն չմասնակցեն, այլև առհասարակ նոյնիսկ կողմնակի կերպով, չաջակցեն բուրժուազական, թէկուզ և ռամկավար, բարենորոգող, մի կառավարութեան, քանի որ դրանից տուժում են սոցիալիզմի սկզբունքները:

Միանգամ ընկնելով թեք ճանապարհի վրայ՝ Գէդի կուսակցութիւնը աւելի հեռու էր գնում իր ծայրայեղութեան մէջ. նա քարոզում էր բանւորներին, սոցիալիստներին՝ կռիւ չմղել ժողովրդական այնպիսի անողոք թշնամիների դէմ, որպիսիներն են՝ կղերականութիւնը, միլիտարիզմը... „Նրանք իրենք իրենց կը տապալուեն արդէն, երբ կը տապալի կապիտալիզմի, բուրժուազիայի ռէժիմը,—այսպէս էին տրամաբանում Գէդիստները:

Եւ համաձայն այդ տրամաբանութեան՝ ֆրանսիական սոցիալիզմի էնտրանզիժան (անհաշտ) թևը, Դրեյֆուսի աշխարհաղողորդ գործի ընթացքում՝ քարոզեց ու պահպանեց կատարեալ ձեռնպահութիւն: Այն ժամանակ, երբ Ժորէս, իր բարեկամներով, իր աննման պերճախօսութեամբ ու յեղափոխականի բուռն թափով ասպարէզ էր նետւում Զօլաների հետ պաշտպանելու ազնւագոյն դատերից մինը՝ արիւնածարաւ անտիսեմիտիզմի և գոռող ու հեստ միլիտարիզմի դէմ, այն ժամանակ, երբ Ժորէսի ու իր բարեկամների ահեղ հարւածների տակ՝ մին-միւսի ետևից մերկանում էին բուրժուազական տիրող ռէժիմի կեղծիքները, զինուորական կաստայի դաւերը, և սարսափահար յետ էր նահանջում ամբողջ ֆրանսիական սպայակոյտը, դահիճ, ժողովրդատեաց գեներալները, — այդ նոյն ժամանակներում աշխարհը զարմանքով ականատես էր, թէ ինչպէս Գէդի կուսակցութիւնը, ֆրանսիական „մարքսիզմը“, մի նեղ ու տարամերժ ֆանատիկոսութեամբ տարւած, քարոզում էր պրոլետարիատին հրաժարուել պայքարից, հրաժարուել ոչէ աջակցութիւնից ի նպաստ

Վալդեկ-Ռուսոյի մենաբարեթեանն, պատճառաբանելով, թէ ՝մերը էջ գայքերը, Դրէյֆուս բուրժուա է, թողնենք բուրժուաներին կռուել իրար դէմ՞:

Ֆրանսիական գրօլեսարիատը հեռուից, սակայն, իր բնական, ազատական բնազդումներին, նա գնաց Ժօռէսի եռանդ և մի փայլուն յաղթութիւն ևս տարաւ, այն ինչ ծիւլ Գէդի կուսակցութիւնը, որ զուտ սոցիալիստական և զուտ, անխառն յեղափոխական լինելու յաւակնութիւն ունէր, միշտ աւելի և աւելի փակուեց իր անշարժ, հակայեղափոխական առանձնութեան մէջ:

Գայքերը յարատևեց երկու բանակների մէջ և 1900 թուին վէճը ենթարկուեց Պարիզի Միջազգային Սոցիալիստական կոնգրէսի ձեռնտու քննութեան:

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

***

Բելգիայի դաշնագիրը ստորագրող պետութիւններին ուղղած դիմումին նա միաժամանակ, կատարած յատուկ պատգամաւորութեան միջոցով, Ամենայն Հայոց Կաթողիկոսը ուղարկեց Ռուսաց կառավարութեան նոյն դիմումը, գրաւոր կերպով: Իբրեւ պատասխան՝ հայոց եկեղեցու Ներկայացուցիչը ստացաւ ռուսաց արտաքին գործերի մինիստրից, յուլիս 17-ից, № 904, հետեւեալ պատասխանը, որ առաջ ենք բերում անփոփոխ.— մեկնաբանները աւելորդ են— իբրեւ քաղաքական փաստաթուղթ:

«Ձեր Սրբութիւն,

Ողորմած Հոգեւոր Հայր.

Ես պատիւ ունեցայ ստանալ Ձեր Սրբութեան հաղորդագրութիւնը, գրած նոյեմբեր 1-ից, որով դուք բարեհաճում էք խնդրել ինձ՝ արկանել առաջնորդաբար դայանը Ձեր ամենահարգելի խնդիրքը՝ ազդելու համար Օսմանեան կառավարութեան վրայ, որպէս զի թեթեւացնի թիւրքահայերի վիճակը, որոնք տանջւում են մահմեդական բռնութիւններից:

Դարձեալ դայանական Մեծութիւնը, ծանօթանալով խնդրագրի բովանդակութեանը՝ բարեհաճեց բարձրագոյն հրամայել ինձ, յայտնելու Ձերդ Սրբութեան, որ Ռուսաց կառավարութիւնը իր ժամանակին, Ձեր դիմումը ստանալուց առաջ, ուշադրութիւն դարձրեց Թիւրքիայի սահմաններում ապրող հայերի վիճակին վրայ:

Հաղորդելով Ձեզ՝ Թիւրքիայում ապրող բոլոր քրիստոնեայ ժողովուրդների բարձր Հովանաւորի և Պաշտպանի այդ պատասխանը, որի սրտին մտիկ են փոքր-Ասիական հայ ազգաբնակութեան շահերը և որի ամենազորմած նախաձեռնութեամբ ձեռք են առնուած ամենաեռանդուն միջոցներ՝ կանխելու հակահայկական յուզմունքները, ես յայտնում եմ հաստատուն յոյս՝ որ Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնների միահամուռ ջանքերով՝ կը յաջողւի ապահովել Թիւրքիայի հայ ազգաբնակութեան խաղաղ և հանգիստ գոյութիւնը, այն պայմանով, ի հարկէ, որ այդ ազգաբնակութիւնն էլ իր կողմից, մնալով օրինաւորութեան սահմաններում, դիւրութիւն կըտայ պետութիւններին՝ հասնելու իրանց մարդասիրական նպատակին:

„Խոնարհաբար խնդրում եմ ընդունել իմ խորին յարգանքի եւ անձնուիրութեան հաւաստիքը, որպէս պատիւ ունեմ մնալ Ձերդ Սրբութեան՝

ԿՈՄՍ ՎԼԱԴԻՄԻՐ ԼԷՄՍԴՕՐՖ

*

Մեզ հաղորդում են Թիֆլիզից.

„Իբրեւ արդիւնք պատերազմի նորանոր անպտղութեան՝ Կովկասում մօրիլիզացիայի պատրաստութիւններ են տեսնում: Կենտրոնական կառավարութիւնը հարցեր է ուղղել գաւառական իշխանութիւններին 1900, 1901, 1902 և 1903 թուականի պահեստի զինուորների քանակի մասին: Կարգադրութիւն է արուած հեծելազօրքը կազմ և պատրաստ պահելու: Թէ ուր պիտի տանին, այդ դեռ յայտնի չէ՞:

*

Բերնի Խաղաղութեան Միջազգային Բիւրօն՞ ուղարկեց Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններին մի յիշատակագիր՝ Մակեդոնական և Հայկական հարցերի մասին: Յիշատակագրի հեղինակն է մեր դատի ջերմ բարեկամ Էլի Դիւկոմմն, որը երկու տարի առաջ ստացաւ Նոբելեան մրցանակը, խաղաղութեան գործին մատուցած իր ծառայութիւնների համար:

*

Ստացանք հետեւեալը Գանձակի գաւառից.

„Գանձակի արիւնոտ դէպքից յետոյ՝ կառավարութիւնը հրաման արձակեց բոլոր պրէստաւներին՝ ժողովել հայերի հրացանները: Մի թիւրք պրիստաւ ուզեց խոյս տալ այդ կարգադրութիւնը կատարելուց բայց երկրորդ անգամ հրաման եկաւ՝ ժողովել հրացանները առանց յապաղելու: Ամենուհետեւ սկսեցին թիւրքերին սիստեմատիկաբար գրգռել հայերի դէմ: այդ նպատակով բէկեր և աղաներ կանչեցին կառավարչապետի մօտ և հրահանգներ տուեցին նահանգապետներին և գաւառապետներին: Լուր կայ, որ նոյնիսկ նոր հրահանգներ կան այդ առթիւ, և մենք կ՝աշխատենք պատճէններից մէկը ձեզ ուղարկել:

„Կառավարութիւնը շարունակում է ռուս գաղթականներով լցնել Գանձակի գաւառը: Ամէն օր խումբ խումբ գաղթականներ են անցնում, որոնց գոյքը բռնի կերպով հայ և թիւրք գիւղացիների են տեղափոխել տալիս: Ռուս գիւղացիք աւելի շատ ռուս գաղթականներով են գրաւած, քան իրանց գործերովը: Վերջին 4-5 տարում հիմնուեցին երկու ռուս գիւղեր, իսկ չորրորդի հիմքն էլ արդէն դրած է: Ոստիկանութիւնը այժմ մի նպատակ ունի,—լցրել ռուս գաղթականների և տեղացիների յարաբերութիւնը. շնորհիւ այդ քաղաքականութեան՝ եկեղ գաղթականները սովորում են նայել հայերի և թիւրքերի վրայ, իբրև իրանց ստորադրեալների. հրամայում են նրանց կատարել իրանց պահանջը, իսկ եթէ չեն կատարում՝ ըսպառնում են գանգատել և մատնել Նահանգապետին... Ռուս գիւղացիներն անգամ սկսել են կարծել որ հային ու թիւրքին ինչ որ անեն, անպատիժ կը մնան, որովհետեւ իրենք արտօնեալ „պրաւոսլաւնի՞ են: Ամենաչնչին բանի համար վազում են Նահանգապետի մօտ գանգատելու: Մի դէպք: Ա. գիւղի թիւրքերը ունենում են արքունական հողում մի աղբիւր և երբ այդ գետինը բնակեցնում է ռուս գաղթականներով, թիւրքերը աղբիւրի նաւը (տաշտ) տանում են. իսկոյն երկու ռուս գնում են ու նանանգապետին գանգատւում: Խորին ցաւ է պատճառում այն փաստը, որ ոստիկանութեան աջողւում է թշնամութիւն սերմանել ժողովրդական մասսաների մէջ:

*

Խարբերդի ամերիկեան հիւպատոսը հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդում Նիւ-Եօրք.

„Սասունի գաւառը հանդարտ է և խաղաղ: Ռուսական կէտերի վրայ՝ մնայուն զօրատուներ մէջ հետեւակ վաշտերից պահակազօրքեր են դրուած: Կոտորածից ողջ մնացողները անօթի վիճակի մէջ են, բայց փորձում են վերաշինել իրենց այրած գիւղերը: Պիթլիզի հիւպատոսական մարմինը կոտորածից, ցրտից և անօթութիւնից մեռնողների թիւը 3,500 է հանում: Մուշի գաւառի մէջ ապստամբները հրոսակային կուսի ձև են ընդունել՝ զօրքերին և քիւրդ խմբերին դարանի մէջ գցելով: Նրանք պահանջում են մի քանի որոշ բարենորոգումներ, որոնք գլխաւորաբար պատկանում են տեղական վարչութեան և տնտեսական վիճակին, և չեն դիպչում կայսրութեան ամբողջութեան“.

*

Բոլոր գարշանքների մարմնացում՝ ռուսաց „Նովոյէ Վրէմիա“ կիսապաշտօնական թերթը շտապում է իր ցասումը յայտնել „Դրօշակ“-ի խմբագրութեանը՝ նրա

հրատարակած այն լուսանկարի առթիւ, որը այնքան ցայտուն կերպով մերկացնում է ցարիզմի բարբարոսութիւնները եւրոպական հանրային կարծիքի առաջ։ Տեսարանը այնքան սասանեցուցիչ է, իրողութիւնը այնքան աներկիօրէն այլանդակ, որ այո՛, նոյնիսկ „Նօվօյէ Վրէմիան“ իր հայակեր ու մարդատեաց խմբագիրներով, մնում է շշմած, կարծես չէ հաւատում, և ռուս բռնակալութիւնը արդարացնելու ճիգեր է անում. „անհաւատալի՛ է, մեզ զրպարտում են“...

Ահա թէ ինչ է գրած այդ թերթի սեպտեմբեր 13-ի համարի մէջ, մի յօդուածում, որ գրեթէ ամբողջապէս նուիրուած է վերը յիշած լուսանկարին (Որսորդի խմբի կոտորածը ռուս զինուորների ձեռքով).

„Մեր քաղաքական սխալը հնարաւորութիւն տուեց հայ ագիտատորներին՝ ոչ միայն մեզ ամբաստանելու, այլև բարդելու Ռուսաստանի վրայ ամենահրէշային զրպարտութիւններ։ Նորերս արտասահմանում հրատարակուած է պրօպագանդի մի հայերէն թռուցիկ, որի մէջ մեղադրւում է թիւրքիայի հետ միասին նաև Ռուսաստանը։ Կոչի մէջ ներկայացուել է սպանուած ու մերկացուած հայերի մի շինծու լուսանկար։ Նկարագրութիւնը ամենավրդովեցուցիչ է։ Կեղծիքը պարզ երևում է նրանից, որ երկու իրարու վրայ դրուած նեգատիվները հանուած են զանազան դիրքերում և ամէն մի ռուս համարեա երբէք անգամ մեծ է նոյնիսկ այն հայերից, որոնք գտնւում են նրանց կողքին կամ առջևում։ Եթէ կեղծիքը այդքան կոպիտ չլինէր, Եւրոպայի մէջ կը հաւատային այդ լուսանկարին, որպէս դօկումենտի։

„Պրօպագանդի այդպիսի անպատիւ միջոցները արժանի են նշաւակութեան և վարկաբեկում են ազատութեան այն դատը, որի համար մի քրիստոնեայ ժողովուրդ կռւում է իր մահմետական հարստահարիչների դէմ. բայց եթէ Ռուսաստանի քաղաքականութիւնը երբէք չշեղուէր առողջական շխտակութիւնից, մի՞թէ ոևէ մէկի մտքովը կ'անցնէր՝ բարդել նրա վրայ չափազանց անհաւանական զրպարտութիւններ“։

Մեկնութիւնները աւելորդ են։ Ստուգելու համար, „Նօվօյէ Վրէմիայի“ յօդուածագիրը կարող էր դիմել հրամանատար Բրկօվին, որը, անշուշտ, պարծանքով կը պատմէր նրան եղելութիւնը, եթէ կենդանի լինէր...

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴԵՐ

ՏԷՌՕՐ

Ջրաբերդի Կենտրոնական Կոմիտէի վճռով, Օլթի քաղաքում, օգոստոս 31-ին, երեկոյեան ժամը 8-ին, տէռորի ենթարկեց ռուսաց սահմանապահ զօրքի գնդապետ ԲՐԿՈՎԸ, Օլթիի եղեռնագործութեան յայտնի հերոսը։ Երեք գնդակներն էլ մահացու էին եւ մահը վայրկենական։ Տէռորիստը ազատ է։ Տպաւորութիւնը մեծ է ամէն տեղ։ Ժողովրդի արդար ցասման արտայայտութիւնն էր այդ եւ նրա վրէժխնդրութեան ծարաւը մասամբ յագեցաւ։

Հ. Յ. Դ. ՋՐԱԲԵՐԴԻ ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

Պարսիկ Խանէն 50 ֆրանք, Հաբէշիստանի Հարար քաղաքի բնակիչ Օ. Թէրզ-էն նուէր 100 ֆր., Կովկասցի վաճառականէն 100 ֆր., Ռուսաստան՝ „Դրամ“ կօմիտէէն՝ 2 անգամէն 17,000 ֆր., Բէրն՝ Ա-ից 20 ֆրանք։ Գումար 17,270 ֆրանք։

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կեդր. Կօմիտէն՝

Արդաբէլի Շահսովան խմբի անդամավճար 54 ղռան, Ընզէլէի Սէր խմբ. 320, Ռաշտի Մեղու խմբ. 202, Վրէժում № 13 թիւ հանգ. շարունակութիւն՝ Ըմանուէլ 150, Թուրա 250, Կօլիկ 20, տիկին Աւազ 30, № 22 թերթով Ս. Պետրոսեան 50, Մնացական 100, Սիսակ 50, Գէորգ 50, Վաղօ 100, Վարդ 10, Վրէժում Կայծակ խմբի աւետիսից 350, միւս խմբերի աւետիսից 350, Արիս խմբ. 120, նոյն խմբէն № 92 ստաց. 110, Անդրանիկ խմբ. 80 ղռան։ Գումար 2495 ղռան։

Շ ա հ ր ու ղ ու մ հանգանակուած՝ Շահրուդի ազգային ֆոնդից 500 ղռան, Մովսէս Գրիգորեան 300, Զօհրաբ Գրիգորեան 20, Թունի 110, Ը. մխնեցի 150, Ք. Մալի 150, Պրն. 100, Վաթան 100, Ա. Նանաջանեանց 150, Խ. Հայրապետեան 150, Մկրտիչ Սաֆարեանց 70, Հանգուցեալ Ա. Նատիրեանց 100, Ապրօ 70, Ե. Սահառունի 100, Շահէն 150, Խան-Միհրան եւ Հայրօ եղբ. 150, Ն. Սիւնեցի 80, Մինաս 20, Անդրնակ 10, Խաչօ 10, Քրիստափոր 20, Աղջիկ պարոն 20, Շուշանիկ 40, Լուսիկ Եապօն 100, Արշալոյս 30, Հրաչեայ 20, Բամբակ 100, Արշաւիր 30, Կէնօֆիա 20 ղռան։ Գումար 2870 ղռան։

Բ ե ա ն դ ա ր գիւղում հանգանակ.՝ Անյայտ ոմն 500 ղ., Ջնդան 150, Գուրգէն 300, Դաւրիժեցի 200, Աղքատ տուքանչի 50, Ս. Տ. 150, Ոստիկ 100, Մոծակ 25, Անգործ 40, Զուլէի 100, Գողթնեցի 30, Անանունից 202, Մալխաս 100, Մելիք 200, Ռշտունի 100, Սալվարդ Նազարեանց 60, Տաճատ 50, Հրատ 50, Սպասում եմ 50, Արշակ 50, Համբարձ. Կարապետեան 55, Յովհ. Մալինեան 85, Զաքուշ 60, Վիշապ Գնունի 50, Թաթուլ 111, Կայծակ 25, Սուրէն սեւ սիւնեցի 50, Դալ-քալամ 7, Երիտասարդութիւն 50, մուրճ 60, եւս Գողթնեցի 20, Երկաթ 50, Դայի 40, Բաջողլի 60, Աստրաբատցի 20, Ռըստամբօլացի 20 ղռան։ Գումար 3260 ղռան։

Ա ր տ ա բ ե լ ո ւ մ հանգնակուած՝ Բուն Հայ 15 ղռան, Ազնիւ Հայ 10, Լուսին 6, Զալըիկ 6, Արսէն 4, Ափի 6, Աֆին 10, օր. Օլօն 112, Զալաբի 6, Սրբ. 4, Արծիւ 10, Ամասնց 10, Բիւրեղիկ 10, Աշխէն Խաչիկեանց 4, Քօռ օղլի 10, Վարդ 8, Խեչօ 8, Անի 4, Ոսկան Տանշից 10, Մաթոս 20, Գետի 2, Շամի 2, Օր. 20, Ն. 20, Արարատեան 20, Թ. 20, Սօֆէն 10, եւս անդամավճարներից 54 ղռան։ Գումար 257 ղռան։ (Շարունակելի)

ՎՐԻՊԱԿ.— № 6 „Դրօշակ“ի մէջ հրատարակուած Ատրպատականի Կեդր. կօմիտէի ցանկը.

№ 7 թերթում 3-րդ տողին մէջ „Ա. Բ. 400, . Բ. 400 եւ 500 փամփուշտ“. պիտի լինի Ա. Բ. 400 ղռան։

№ 13 հանգ. թերթով պարբերութեան 2-րդ տող՝ „Հուր 60-ը“ կարդալ Ջուր 60։

„Մարաղայ խմբից“ սկսուող պարբերութեան մէջ՝ „Կայծակ խմբ. Ներկայացումից, խնջոյքներից եւ ամսավճարներից 111 ղռան 40 կօպէկ“. պիտի լինի 1119 ղռան 40 կօպէկ։

№ 7 թերթով առաջին պարբերութեան վերջը Ա. Պ. 7774 եւ Բ. Պ. 2350 ցանկի սխնակներու գումարն է, հետեւաբար պէտք է ջնջել։ Նոյն ցանկի „Մարաղայ խմբից“ սկսուող պարբերութեան 8-րդ տողին մէջ „Գոմ 200 ղռան“, պիտի ջնջւի։

ՆԱԽԱՋԱՆԳՍՏԻ Կեդր. Կօմիտէն՝

Ա ր շ ա կ ա ւ ա ն քաղաքից՝ հետեւեալ խմբերից՝ Կանանց Վրէժուհի 35. 30 ռուբլի, Գեղամ 13, Ծովասար 14. 40, Պողպատ 20. 50, Բօզ-Եօգուշ 10, Կաթիլ 28. 50, Քաջբերունի 50, Դերձակ 41. 30, Նոր-կեանք 55. 80, Մանծասէր 10, Արծրունի 66. 20, Բիւրակ 25. 50, Վարազդատ 74. 90, Արարատ 17, Կաթիլ 50, Բօզ-Եօգուշ 20. 60, Դերիկ 37. 50, Առիւծ 29, Պողպատ 70, Մուշեղ 40. 50, Խաչաժեւ 30, Գազան Տարօնացի 16. 60, Ծովասար 14. 40, Կարին 12, Ծրընկատար 60. 80, Տարօնացի 35, Վրէժուհի 36. 50, Կայծակ 40. 80, Սուրէնեան 34. 20, Բագրատունեաց 47, Արմատ խ. ճիւղ 51. 10,

Հայկազեան 29. 40, Ճորոխ 45, Արծիւ 42. 40, Կարին 7, Դերժակ 133, Քաջբերունի 39, Մահ 66, Լոյս 26. 80, Ջարեւանդ 83. 40, Արմատ 65. 12, Արշալոյս 151. 20, Սիփան 91, Արաքսեան 25. 50, Ռուբէնեան 120, Կարէշ 94, Բագրատունեաց 45, Իշխանեան 127, Նեփրովք 129. 50, Սօղեան 155, Խիկար 40, Մախենի 50, Աղբիւր 67, Մասիս 29. 50, Մահ 21, Կաթ-աղբիւր 21, Պանդուխտ հայրենեաց 105, Արարատեան 40. 30, Ցուսաբեր աստղ 25, Լոյս 40, Դեւրիկ 11, Կաթիլ 25, Ծովասար 9. 60, Պողպատ 21. 60, Արարատ 4. 50, Արծրունի 21, Գազան Տարօնացի 8. 50, Կարէն 7. 50, Վարազդատի ներկայացումից 50, նոյն խ. ամսվճ. 31. 30, Արմատ II. ճիւղ 25, Բագրատունի 20, Դերժակ II. ճիւղ 25. 45, Աղբիւր 13. 50, Կայծակ 20. 80, Խիկար 19, Հայկազեան 9. 80, Արմատ 140, Ջարեւանդ 35. 80, Վրէժուհի 10, Գազան 8. 50, Մանզաւեր 13. 50, Աղբիւր 8, Մասիս 30. 50, Արշալոյս 58. 30, Արարատ 7, Առուից 23. 30, Ծովասար 6. 40, Արմատ 20. 30, Կաթիլ 25, Միւրաք 13, Արծրունի 21, Մուշեղ 38, Խաչալեռ 24, Սիփան 19, Արագած 15, Դերժակ 60, Սրնտարայ 25. 60, Սուրէնեան 22. 20, Արմատ II. ճիւղ 12. 40, Իշխանեան 28, Կարէճ 23, Մայր-Արաքսի 34. 10, եւս 9. 5, Արմատ 21. 40, Լուսաբեր 13. 80, Արմատ III. ճիւղ 44. 40, Դեւրիկ 22, Արծիւ I. II. ճիւղ 34. 60, Ռուբինեան 31, Ղարա-տուման 70. 55, Մանկունի 34, Դերժակ 66, Վրէժուհի 10, Ճարտար 113. 80, Կաթ աղբիւր 100, Արարատ 52. 70, Ասեղ եւ Գնդասեղ 40, Լուսաբեր Աստղիկ 54, Մահ 20, Ջարեւանդ 70, Կայծակ 23. 60, Արմատ III. ճիւղ 22. 60, Պողպատ 41. 80, Լուսաբեր 81. 50, Մանզաւեր 41. 50, Գազան Տարօնացի 34, Ծրնկատար 13. 70, Մասիս 31. 50, Լուսաբեր 100, Դեւրիկ Սասունի օգտին 70, Ծովասար 12. 50, Մայր-Արաքսի 26. 85, Կաթիլ 23, Նոր-կեանք 19. 45, Գազան Տարօնացի 22, Ծովասար 17. 40, Կայծակ 32. 30, Արտաւազդ 15, Ռուբինեանց 25. 50, Վարազդատ 82. 10, Բագրատ. պատանի 15, Քաջալեռ 40, Մուշեղ 32. 60, Ծրնկատար 22. 80, Աղբիւր 11, Մոշոտախ Ալկց. գիւղ 80, Նեփրովք 48, Բողբոջ 40, Անի 20, Պահանջ 4, Վարազդատի ձեռնարկ. ներկայացումից 410, Բագրատ 49. 50, Ճարտար 80, Վրէժուհի Սասունի օգտին 66, Վրէժուհի ամսավճ. 20, Խիկար 34. 50, Մտրակ 8, Սօշեան 79, Տարօնացի 55, Մախէն 56, Տիկ. Մասիս վիճակախաղից 100. 70, Շահում 51. 60, Ազիզ 15, ռուբլի Մահ 2035 փամփուշտ նուէր: Անհատներից՝ Պաղտասար 5 ռուբլի, Ցակոբ 3, Գրիգոր 1, Մարգար 5, Վահան 5, Մ. Ինջերկեան 5, Զորափորի Երկաթ 133, Աւետիսից Պողպատ խ. միջ. 30. 15, Կուլովկա Վաղան 5, Պ. Ղազարեան 5, Սարգիս Մարտիրոսեան 5, Լեւոն Ստեփանեան 3, Մ. Մանուկեան 3, Մ. Սահակեան 5, Պ. Արշակեան 1, Գ. Ցակոբեան 3, Ս. Դաւիթեան 2, Դժիկ խ. անդամ Մարտիրոս 5. 50, Ազիզեան Արտէմ 10, Պանդուխտ պատանի 5, Ս. Մուրատեան 3, Թորգոից 50, Բագրատ պատ. 14, Սոխպետ 200, Ց. Զեուգ № 220՝ 500, Մանկունի 50, Ներկայացումից 304, Ս. Գրիգոր 3, Խաչ. Գէորգ. 2, Ց. Կարապետեան 10, Պ. Մալխասեան 5, Մ. Նասուսեան 5, Ց. Կարապետ 3, Ռ. Շ. 100, Տ. Տր. Միք. 100, Զորաբերդցի Փայլակ 20, Արարատ խ. ընկերներ 10, Տ. Միք. 100, Երզնկացիներից Սասունի օգտին 50, Շահում խ. Շախտից 48. 25, Պ. Կ. Քօչ 10, Մ. Մկր. 5, Տարախչին Սասունի օգտին 71, Ն. Զինգ 100, Տ. Պետ. 50, Առու 17. 20, Արարատ 11. 50, Խարախանեանի հաշւից 23. 41, Կայծերի ձեռքով 13. 80, Սերոբ 15, Մի սպայից թերհաշիւ 200, Սասունի օգտին Փիլոսի միջ. 55, Մաթանեան 9, Բաղալ աղք. 9, Աւետիս 2, Մարտիրոս 2, Թափեան ծէր 10, Ազիզեան Արթ. 9, Մամօ 3, Վիշապի հաշւից Գարեգինից 37, Տէր Քօշի միջ. Անտառ գիւղից 35. 90, եւս 5, Ջարդ 12, Տիրացուից 7, Կարօ 25, Խորէն 20, Յոսրովեան 15, Արծաթ 15, Մռայլ, Մաշար, Երջանիկ, Սպիտակ սար, Վաստակ 10-նական, Ց. Պեքերեան, Ս. Մղդասեան, Ց. Այտնեան, Ն. Սուրէնեան, Ց. Մարգարեան, Ց. Սուրէնեան, Ց. Քօչկանեան, Ս. Ծատուրեան, Անկիւն Երկաթ գիւղից, Անւազաւակ, Մելիք, Շահնազար, Սուրճ, Ստօլ, Սազ, Թասքիր, Որսորդ, Պատճառ, Յար, Բաժին, Երւանդ, Վիշապ, Կարմիր Երկաթ գիւղ, Հինգ, Ճերմակ, Կապոյտ, Չիլաք, Սեւասար, Թաշկինակ, Թութունճեան 5-ական, Ա. Առաքելեան 6, Մ. Վ.-ի ձեռամբ 140, Պ. Հ. Հլոր. ձեռ Անտառ գիւղից 99. 20, Դիրաքանցիներ 3, Ճանիկ 3, Աւօյից ծով. հետն. անկ. 13, Նորշէնից 10, Գ.-ի միջոցով 21, Բագրատ 3, Լուսաբեր 20. 10, Կարէշ 28. 50 ռուբլի:

Ամարանոցից՝ հետեւեալ խմբերից՝ Պանդուխտ Հայրենասէր 34. 80 ռուբլի, Արարատ 20. 70, Պանդուխտ պատանի 9. 50, Մահ 17. 50, Սրպէհիթ 26, Կաթ-աղբիւր 26. 50, Մահ 15, Լուսաբեր աստղ 7. 50, Արարատ 20, Արփինարքու 25, Պանդուխտ Պատանի 25, Պանդուխտ Հայրենասէր 18, Սրպեհիթ 108 40: Անհատներից՝ Արփինարքու 97. 50, Ասեղ եւ Գնդասեղ 100, Տէրտէրից 20, Արարատ խ. Կայծերի ձեռամբ 25, Կաթ-աղբիւր 25, Մուրատ 25, Իզմիր 200, Իզմիրեան 6, Պանդուխտ Պատանի 25, Սրպիհիթ 45, Պանդուխտ պատանի 23, Պանտուխտ հայրենասէր 116. 90 ռուբլի:

Ծաղկաձորից՝ հետեւեալ խմբերից՝ Կիլիկիա 4. 85 ռուբլի, Արշալոյս 5. 75, Ցոյս 7. 20, Կայծակ 6. 60, Կայծ 2, Հերոսական 9. 50, Զնդան 5. 30, Անի 1. 95, Աւրոտա 3, Վրէժ 1. 50, Կայծակ 6. 25, Ցոյս 3. 60, Անի 2. 5, Աւտորա 3, Զնդան 5. 15, Հերոսակ 13, Արշալոյս 2. 55, Կիլիկիա 2. 35, Վասպուրական 8, Կայծակ 16. 60, Ներկայացումից 35. 65, Նոր քղք.-ից օր. Կայծակ 35 ռուբլի:

Ջրաշէնից՝ Նոր բազուկից 15 ռուբլի, հետեւեալ խմբերից՝ Գրգռու 50, Վիշապ 23, Խամուր 50, Ղարիբ 20, Աւետարան 20, Գրգռու 54, Արծրունի 45, Կարին 15, Խամուր բերդ 75, եւս 15, Ղարիպ 85, Գեղարդ 22. 50, Գրգռու 32, Վիրապից 33 ռուբլի:

Ապաստանից՝ Ղարիբի միջոցով հանգանակուած Ց. Ա. 20 ռուբլի, եւս 15, Դ. Ք. 12, Գ. Կ., Ց. Ա., Պ. Ց., Ց. Ց. 15-ական, Ա. Ս., Ա. Փ., Դ. Ե., Մ. Ք., Մ. Ե. 10-նական, Գ. Ս. 8, Մ. Գ., Ց. Գ., Հ. Տ. 7-ական, Ց. Ս. 6, Ս. Վ., Կ. Տ., Կ. Վ., Կ. Վ., Կ. Գ., Կ. Ց., Կ. Փ., Վ. Ց., Կ. Զ., Պ. Գ., Պ. Տ., Ց. Տ., Գ. Վ., Ա. Ա., Ս. Ի., Ն. Աւ., Ց. Ա., Կ. Թ., Ց. Տ., Մ. Ա., Ց. Գ. Գ. Մ., Ն. Ե., Գ. Ք., Ն. Ա., Ց. Ա., Ց. Աք. Վ. Ք. 5-ական, Դ. Ե., Ց. Ք. 4-ական, Պ. Գոշ., Ց. Ծ., Դ. Ք. Ս. Ք., Ց. Ե., Կ. Թ., Գ. Գ., Ց. Ե., Ս. Զ. 3-ական, Մ. Վ., Ն. Վ., Ց. Փ., Գ. Ա., Կ. Ա., Մ. Ս., Ց. Ր., Ց. Ք., Ց. Թոսյ., Ղ. Ա. 2-ական, Ց. Գ. 1. 50, Գ. Գ. 1. 50, Ն. Ս., Հ. Կ., Մ. Վ. 1-ական ռուբլի, Մ. Փ. 80 կոպէկ: (Տարոնականի)

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ *կեդր. կոմիտէն՝*

1903 թ. հոկտեմբերէն մինչեւ յունւար.—

Զապուղոնի վահրիճէն տուգանք 424 ղահեկան, Նիքի Բաղդոյէն տուգանք 100, Ազատ ղաշտէն՝ Խաչօ 25, Կ. 80, Բժէ 15, Բաղդօ 80, Ծովալանջէն՝ Ջարմայր 60, Կաւիճէն՝ Բաղդօ 540, Ռէս 108, Օվազիսէն՝ Խ. 108, Բերդագիւղէն՝ Տանուտէր 516, Երէց 1080, Կրէ 108, Աւօ 1080, Սամուէլ 532, Կաւիճէն՝ Նորածիլ խմբ. 50, Գետափէն 10, Բիւրակէն 15, Սփինքսէն՝ Արա խմբ. 20, Շ-ի Արածանի խմբ. 15, Մահի Քնար խմբ. 20, Արսէն 40, Զօքան օղլու 10, Ցովհաննէս 80, Սփինքսէն՝ Արայ խմբ. 20, Շ-ի Ջալլադ խմբ. 40 ղահեկան: Գումար 5,176 ղահեկան:

Ծովալանջի ա. ենթակոմիտէն 1904 թ. մայիս 1-էն յուլիս 11.— Տաճատ 108 ղահեկան, Ցոլակ 54, Շաւարշ 54, Եփրատ 10 չ. ցորեն, Մանուէլ 10 չ. ցորեն, Աթանաս 12 ոչխար, Նասիպ 12 ոչխար 1 երինջ, Մարկոս 4 ոչխար 1 արջառ, Վարդերես 2 ոչխար 1 արջառ, Կոստի 1 եզ, Փիլիպպոս 6 ոչխար, Տիգրիս 3 ոչխար, 4 չ. ցորեն, Խմբականէն 14 չ. ցորեն:

ՈՍԿԱՆԱՊԱՏԻ *երկրորդ կոմիտէն՝*

1904 թ. մարտի 1-ից մինչեւ ապրիլի 30-ը.—

Հետեւեալ խմբերից՝ Զանգ բ. 14. 25 ռուբլի, Կարկուտ 12. 50 ռուբլի, Ոստանիկ 10, Վազգէն 28. 60, Կայսրան 32, Ծերուկ 9, Իմ 2. 20, Ծաղկաձոր 1. 20, դ.-րդ մաս 0. 75, ե.-րդ մաս 1. 40, Ջրաբերդ 2. 80, Մասիս բ. 2. 60, Աքրօ 8, Զարմայր 10, Սերեմնեան 24. 40, Ոստանիկ 9. 50, Րաֆֆի 14. 50, Վազր 57. 30, Ասլան Բալասի 18. 50, Կեանքի Առիթ 14. 50, Շերօ-Զաթօ 28, Երիտասարդ 8. 71, ապառիկ Որոտի ներկայաց. 7, Դևին 9. 50, Ծերուկ 7. 50, Ծաղկաձոր 1. 20, Մասիս բ. 1. 80, Ջրաբերդ 2. 60, ե.-րդ մաս 1. 25, Իմ 2. 20, Ոստանիկ 11, Զանգ ա. 15. 75, Որոտն 9. 20, Դրօշակ 17. 66, Աքրօ 9, Զ. քաղաքից՝ Ալազանի Հարազատ 20, Փոթորիկ 10, Նոր Լոյս 3. 50, Ճորա-պահակ 25. 80. Ռաշիտ 15, Անդրանիկ 10, Դաշնակ 8, Դաւիթ-Բէկ 5, Շափօ 3, Նոր Սերունդ 13, Ոստանիկ 11. 50, Նոր Լոյս 3. 50, Նովրուզ 7. 50, Գողթան 67, Սասուն 19, Զ. քաղաքից՝ Ալազանի Հարազատ 30, Փոթորիկ, Կոկոն, Շլած 5-ական, Կեանքի առիթ 14, Սեւրոբ-աղբիւր 29. 45 ռուբլի: Անհատներից՝ Ապառիկ աւետիսի № 32 թերթից 9 ռուբլի, երեկոյթի մնացորդ 5, անցագիրներից աւելցած 10, մի պարոն 5, Գ. Ք. 2,000 Բ. Ց. 1,000, Շ. քաղաքից՝ տիկիններ՝ Վ., Բ., Ն. 5-ական, Մ. 2, Հանգանակութ. թերթ № 25-ով 228. 45, թերթ № 24-ով 31. 50, թերթ № 26-ով 66. 25, Գեօչ-ից 6, Ասլան և ընկ. 5, թերթ № 29-ով 107. 85, տիկին Գ. Պ. 5, Պ. 3, Բերդ քաղաքի «Գործ» ենթակոմիտէից՝ Լուսնեակ 10, Արեգակ 5, Վերարկու 3, Պատկերահան 1, Գլխարկ 2, Կօզակ 1, Պալտօն 1, Բաղմանչի 1, Մեսիա 3, Վահան 5, Աղից 3, Ն. 10, Կ. 10, Անահիտ 25, Ապրէլ 25, № 13 15, Ջ. 10, Դեղ 5, Թ. 2, Պ. 2, № 3՝ 31, Մօր 10, Սաքօ 3, Հրդեհ 5, Ա. 10, Ղարասու 10, Ժողպաւէն 6. 5, Թ. և Ս. 2, Ցով. 4, Մարդ 2. 50: Գումար 4410 ռ. 62 կոպէկ: